ՆԱԽԱԳԻԾ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԸ**

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 1.** 2018 թվականի փետրվարի 7-ի «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Օրենք) 21-րդ հոդվածում՝

1) լրացնել նոր 2.1-րդ մաս.

«2.1. Օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու մասին միջնորդությունները քննվում են Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի քրեական մասնագիտացման դատավորների կողմից:».

2) 3-րդ մասից հանել «, օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու մասին միջնորդությունների» բառերը:

**Հոդված 2.** Օրենքի ամբողջ տեքստում «կարգապահական հարցերի հանձնաժողով» բառերը և դրանց հոլովաձևերը փոխարինել «Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողով» բառերով և դրանց հոլովաձևերով:

**Հոդված 3.** Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասում «ընտրվելու,» բառից հետո լրացնել «նրա նկատմամբ սույն օրենսգրքի 149-րդ հոդվածի 1-ին մասի 3.2.-րդ կետով սահմանված կարգապահական տույժի կիրառման,» բառերը:

**Հոդված 4.** Օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ նախադասությունը հանել:

**Հոդված 5.** Օրենքի 45-րդ հոդվածում՝

1) վերնագրից հանել «և օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու մասին միջնորդություններ քննող դատավորներին» բառերը.

2) 1-ին մասի 4-րդ կետում «նախագահների» բառից հետո լրացնել «, Էթիկայի և կարգապահական հարցերի և դատավորների գործունեության գնահատման հանձնաժողովների» բառերը.

3) 1-ին մասի 5-րդ կետից հանել «Վճռաբեկ դատարանի և » բառերը.

4) 1-ին մասում լրացնել նոր՝ 5.1.-ին կետ.

5) «5.1.) 60 տոկոս՝ Վճռաբեկ դատարանի նախագահի համար»:

**Հոդված 6**. Օրենքի 51-րդ հոդվածի 6-րդ մասում «գլխավոր դատախազը» բառերից հետո լրացնել «կամ նրա տեղակալը» բառերը:

**Հոդված 7**. Օրենքի 53-րդ հոդվածում՝

1) 1-ին մասում «և համապատասխան դատավորին» բառերը փոխարինել «, իսկ առանց դատարանի թույլտվության իրականացվող քննչական գործողության մասին՝ նաև համապատասխան դատավորին:» բառերով.

2) 2-րդ մասում «վայրում» բառից հետո լրացնել «(եթե դատավորը սույն հոդվածի 1-ին մասի համաձայն իրազեկվել է քննչական գործողության իրականացման մասին)» բառերը:

**Հոդված 8.** Օրենքի 66-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերն ուժը կորցրած ճանաչել:

**Հոդված 9.** Օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասում լրացնել նոր՝ 15-րդ և 16-րդ կետեր.

«15) ներկայացնել գույքի, եկամուտների և շահերի հայտարարագիր «Հանրային ծառայության մասին» օրենքով նախատեսված պահանջների պահպանմամբ.

16) «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքով նախատեսված դեպքերում և կարգով Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին ներկայացնել պատշաճ նյութեր կամ պարզաբանումներ, որոնք հաստատում են, որ իր գույքի փոփոխությունը (գույքի ավելացումը և (կամ) պարտավորությունների նվազումը) ողջամտորեն հիմնավորվում է օրինական եկամուտներով, կամ իր մոտ առկա չէ չհայտարարագրված կամ ոչ ամբողջական հայտարարագրված գույք, կամ եկամտի աղբյուրը օրինական է և արժանահավատ է:»:

**Հոդված 10.** Օրենքի 70-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասի 4-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ. «պահպանել ներքին աշխատանքային կարգապահության կանոնները.».

2) 2-րդ մասի 10-րդ և 11-րդ կետերը ուժը կորցրած ճանաչել.

3) 2-րդ մասի 14-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«14) զերծ մնալ այնպիսի գործողություններ ձեռնարկելուց, որոնք նպատակ են հետապնդում ստեղծել ինքնաբացարկի հիմքեր.».

4) 2-րդ մասը լրացնել նոր՝ 18-րդ կետ.

«18) ինքնաբացարկի հիմքերի առկայության դեպքում դրանք բացահայտել կողմերին, ինչպես նաև սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում և կարգով հայտնել ինքնաբացարկ:»,

5) լրացնել նոր 3-րդ մաս.

«3. Դատարանի նախագահը պարտավոր է սույն օրենսգրքով սահմանված դատարանի նախագահի պարտականությունները կատարել պատշաճ և ձեռնպահ մնալ այնպիսի գործողություններից, որոնք կարող են հանգեցնել դատարանի բնականոն գործունեության խաթարման:»

**Հոդված 11.** Օրենքի 73-րդ հոդվածում՝

1) 1-ին մասից հանել «, եթե ողջամտորեն կարող է ընկալվել, որ այն կապված է իր պաշտոնեական պարտականություններն իրականացնելու հետ» բառերը:

**Հոդված 12**. Օրենքի 74-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետում «Ուսումնական հարցերի» բառերից հետո լրացնել «, դատավորների գործունեության գնահատման (այսուհետ՝ Դատավորների գործունեության գնահատման հանձնաժողով)» բառերը:

**Հոդված 13.** Օրենքի 77-րդ հոդվածում՝

1) 1-ին մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«1. Ընդհանուր ժողովը ձևավորում է Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողով, Դատավորների գործունեության գնահատման հանձնաժողով և Ուսումնական հարցերի հանձնաժողով:».

2) 4-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«4. Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի կազմում ընդգրկվում է ութ անդամ, որոնցից երկուսը՝ մասնագիտացված դատարանների դատավորներից՝ յուրաքանչյուր մասնագիտացված դատարանից՝ մեկ դատավոր, երկուսը՝ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավորներից՝ քրեական և քաղաքացիական մասնագիտացմամբ, մեկը՝ վերաքննիչ դատարանների դատավորներից, մեկը՝ Վճռաբեկ դատարանի դատավորներից: Բացի դատավորներից, Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովում ընդգրկվում են 2 հեղինակավոր իրավաբաններ, որոնց ներկայացնում են, սույն հոդվածի 7.1-րդ մասում մատնանշված գործունեություն իրականացնող հասարակական կազմակերպությունները:».

3) 5-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«5. Ուսումնական հարցերի հանձնաժողովի կազմում ընդգրկվում է յոթ անդամ, որոնցից մեկը՝ Վճռաբեկ դատարանի դատավորներից, երկուսը՝ վերաքննիչ դատարանների դատավորներից, երկուսը՝ առաջին ատյանի դատարանների դատավորներից: Բացի դատավորներից, Ուսումնական հարցերի հանձնաժողովում ընդգրկվում են 2 հեղինակավոր իրավաբաններ, որոնց ներկայացնում են սույն հոդվածի 7.1.-ին մասում մատնանշված գործունեություն իրականացնող հասարակական կազմակերպությունները և որոնց նկատմամբ տարածվում են այդ մասով սահմանված պահանջները:

Ուսումնական հարցերի հանձնաժողովի հեղինակավոր իրավաբաններին ընտրում է Ընդհանուր Ժողովը՝ սույն հոդվածի 7.1-ին մասով սահմանված կարգով՝ չորս տարի ժամկետով:»

4) լրացնել նոր՝ 5.1.-ին և 5.2.-րդ մասեր.

«5.1. Դատավորների գործունեության գնահատման հանձնաժողովի կազմում ընդգրկվում են 5 անդամ՝ երկու իրավաբան գիտնական, մեկ դատավոր՝ Վճռաբեկ դատարանից, մեկ դատավոր՝ վերաքննիչ դատարանից և մեկ դատավոր՝ առաջին ատյանի դատարանից:

5.2. Դատավորների գործունեության գնահատման հանձնաժողովի անդամի թեկնածու կարող է ընտրվել այն դատավորը, ով ունի դատավորի պաշտոնում առնվազն հինգ տարվա աշխատանքային փորձ և գործունեությունը գնահատված լինելու դեպքում՝ գնահատման վերջին արդյունքներով՝ բարձր կամ լավ գնահատական, իսկ իրավաբան գիտնական անդամի թեկնածու կարող է ընտրվել այն հեղինակավոր իրավաբանը, որն օժտված է բարձր մասնագիտական որակներով և ունի իրավագիտության բնագավառում գիտական աստիճան և մասնագիտական աշխատանքի առնվազն հինգ տարվա փորձառություն:».

4) 6-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«6. Գործող դատավորը և իրավաբան գիտնականը՝ բացառությամբ էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի, որպես հանձնաժողովի անդամ կարող են առաջադրվել ինքնաառաջադրման կամ Ընդհանուր ժողովի որևէ դատավորի կողմից իրենց համաձայնությամբ առաջադրվելու եղանակով:».

5) 7-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«7. Հանձնաժողովների անդամներին ընտրում է Ընդհանուր ժողովը՝ գաղտնի քվեարկությամբ՝ չորս տարի ժամկետով: Ընդհանուր Ժողովի կողմից հանձնաժողովների ոչ դատավոր անդամներին սահմանված ժամկետում չընտրելու դեպքում քվեարկությունից հետո տասնօրյա ժամկետում նրանց ընտրում է Բարձրագույն դատական խորհուրդը: Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի անդամների ընտրության առանձնահատկությունները սահմանվում են սույն հոդվածի 7.1.-ին մասով:»:

6) լրացնել նոր՝ 7 .1.-ին մաս.

«7.1. Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի դատավոր անդամներին ընտրում է Ընդհանուր ժողովը՝ գաղտնի քվեարկությամբ՝ երկու տարի ժամկետով: Էթիկայի և կարգապահական հանձնաժողովի ոչ դատավոր անդամներին ներկայացնում են համապատասխան հասարակական կազմակերպությունները: Որպես հանձնաժողովի անդամ կարող է առաջադրվել այն հեղինակավոր իրավաբանը, որն օժտված է բարձր մասնագիտական որակներով և ունի իրավագիտության բնագավառում գիտական աստիճան կամ մասնագիտական աշխատանքի առնվազն հինգ տարվա փորձառություն, որևէ կուսակցության անդամ չէ և չունի դատվածություն դիտավորությամբ կատարված հանցանքի համար: Վերջիններիս ներգրավելու նպատակով Դատական դեպարտամենտը

դատավոր անդամների ընտրությունից առնվազն երեսուն օր առաջ հայտարարում է մրցույթ, որի շրջանակներում մեկական թեկնածու կարող են առաջադրել այն հասարակական կազմակերպությունները, որոնց կանոնադրական նպատակներից է մարդու իրավունքների պաշտպանությունը կամ դատական իշխանության հանրային հաշվետվողականության բարձրացմանն ուղղված գործունեությունը և որոնք վերջին հինգ տարիներին իրականացնում են նման գործունեություն: Թեկնածուների կենսագրությունները և նրանց ներկայացրած կազմակերպությունների վերաբերյալ տեղեկությունները հրապարակվում են դատական իշխանության պաշտոնական կայքում: Հանձնաժողովի անդամների ընտրությունն իրականացվում է Ընդհանուր ժողովի կողմից՝ հաշվի առնելով թեկնածուի կրթությունը, նրա և նրան ներկայացրած կազմակերպության՝ սույն հոդվածով սահմանված պահանջներին համապատասխանությունը, քննարկման առարկա բնագավառում գործունեության փորձը, արդյունքները, ձեռքբերումները և ուշադրության արժանի այլ հանգամանքներ: Հանձնաժողովի անդամներին ընտրելու վերաբերյալ որոշումն ընդունվում է Ընդհանուր ժողովի կողմից քվեարկությանը մասնակցող դատավորների ձայների մեծամասնությամբ՝ բաց քվեարկությամբ, երկու տարի ժամկետով: Մրցույթի անցկացման և հանձնաժողովի անդամների ընտրության կարգն ու մանրամասները սահմանում է Բարձրագույն դատական խորհուրդը:»:

7) լրացնել նոր՝ 9-11-րդ մասեր.

«9. Դատավորների գործունեության գնահատման, ինչպես նաև էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովների ոչ դատավոր անդամին Դատական դեպարտամենտը վճարում է վարձատրություն Կառավարության սահմանած կարգով և չափով:

10. Հանձնաժողովի անդամի լիազորությունները դադարում են սույն օրենսգրքի 160-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված դեպքերում, և դադարեցվում են տարվա ընթացքում հանձնաժողովի նիստերին անհարգելի պատճառով առնվազն երկու անգամ չմասնակցելու, առնվազն մեկ անգամ քվեարկությունից հրաժարվելու կամ ձեռնպահ մնալու դեպքում, բացառությամբ սույն օրենսգրքով նախատեսված քվեարկությանը մասնակցությունը բացառող դեպքերի, օրենքով և Հանձնաժողովի աշխատակարգով նախատեսված իր պարտականությունները չկատարելը, իսկ դատավոր անդամների դեպքում՝ նաև որպես դատավոր լիազորությունները դադարեցվելու կամ դադարելու դեպքում: Հանձնաժողովի անդամի լիազորությունները դադարեցնելու հարցը լուծելու համար Հանձնաժողովի նախագահի կողմից նիստ չհրավիրվելու դեպքում այն հրավիրվում է Հանձնաժողովի առնվազն երեք անդամի կողմից: Հանձնաժողովը կայացնում է որոշում Հանձնաժողովի անդամի լիազորությունները դադարեցնելու մասին: Հանձնաժողովի նախագահի լիազորությունների դադարում են նրա՝ որպես Հանձնաժողովի անդամի լիազորությունների դադարման կամ դադարեցման, ինչպես նաև նրա՝ Հանձնաժողովի նախագահի պաշտոնից հրաժարական ներկայացնելու դեպքում: Հանձնաժողովի նախագահի կողմից իր պարտականությունները չկատարելը հիմք է Հանձնաժողովի անդամների

ընդհանուր թվի ձայների առնվազն երկու երրորդով ընդունված որոշմամբ նրա լիազորությունները դադարեցնելու համար:

11. Հանձնաժողովի անդամի թափուր տեղ առաջանալու դեպքում հանձնաժողովի նախագահը յոթօրյա ժամկետում դիմում է Վճռաբեկ դատարանի նախագահին՝ արտահերթ Ընդհանուր Ժողով հրավիրելու և հանձնաժողովի նոր անդամի ընտրությունը կազմակերպելու համար: Արտահերթ Ընդհանուր Ժողով պետք է հրավիրվի հանձնաժողովի նախագահի դիմումը ստանալու պահից մեկամսյա ժամկետում:»:

**Հոդված 14.** Օրենքի 78-րդ հոդվածում՝

1) 1-ին մասում «իր կազմից» բառերից հետո լրացնել «, իսկ Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովն իր դատավոր անդամների կազմից» բառերը.

2) լրացնել նոր՝ 4-րդ մաս.

«4. Դատավորների գործունեության գնահատման հանձնաժողովը՝

1) իրականացնում է դատավորների գործունեության գնահատումը,

2) սույն օրենսգրքի 142-րդ հոդվածով սահմանված՝ նյութական կամ դատավարական իրավունքի նորմի խախտում կամ դատավորի վարքագծի կանոնների խախտում (այդ թվում՝ էական կարգապահական խախտում) հայտնաբերելու դեպքում դիմում է Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովին՝ դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու հարցը քննարկելու համար:»:

**Հոդված 15.** Օրենքի 84-րդ հոդվածում՝

1) 9-րդ մասի «ընտրվում է» բառից հետո լրացնել «առանց վերընտրման իրավունքի երկուսուկես տարի ժամկետով, բայց ոչ ավելի քան» բառերը.

2) 10-րդ մասի «անդամի թափուր տեղը համալրվելուց» բառերը փոխարինել «նախագահի պաշտոնը թափուր մնալուց» բառերով:

**Հոդված 16.** Օրենքի 85-րդ հոդվածի 2-րդ մասում լրացնել նոր նախադասություն.

«Սույն օրենսգրքի 69-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ և 16-րդ կետերով նախատեսված վարքագծի կանոնների խախտման առնչությամբ Բարձրագույն դատական խորհրդի անդամի նկատմամբ կարգապահական վարույթ է հարուցում և նրան կարգապահական պատասխանատվության ենթարկելու միջնորդությամբ Բարձրագույն դատական խորհուրդ է դիմում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը:»:

**Հոդված 17.** Օրենքի 86-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի 3-րդ կետում «մտնելը» բառից հետո լրացնել «կամ քրեական հետապնդումը ոչ արդարացնող հիմքով դադարեցնելը» բառերը.».

2) լրացնել նոր՝ 3.1 մաս.

«3.1. «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված անհամատեղելիության պահանջները խախտելու հիմքով լիազորությունները կարող են դադարեցվել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի՝ Բարձրագույն դատական խորհուրդ ներկայացրած եզրակացության հիման վրա:»:

**Հոդված 18.** Օրենքի 89-րդ հոդվածում 1-ին մասի 27-րդ կետում «սահմանում է» բառերից հետո լրացնել «դատավորների ներքին աշխատանքային կարգապահության կանոնները,» բառերը»:

**Հոդված 19.** Օրենքի 90-րդ հոդվածի 6-րդ մասում «երբ դրանք» բառերից հետո լրացնել «Բարձրագույն դատական խորհրդի անդամի կամ դատավորի միջնորդությամբ» բառերը, երկրորդ «խորհրդի» բառից հետո լրացնել «պատճառաբանված» բառը, իսկ «, կամ դատավորն այդպիսի միջնորդություն է ներկայացրել» բառերը հանել:

**Հոդված 20.** Օրենքի 94-րդ հոդվածում՝

1) 4-րդ մասում «ընդունվում են» բառերից հետո լրացնել «բաց քվեարկությամբ» բառերը.

2) 5-րդ մասը ճանաչել ուժը կորցրած.

3) 6-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«6. Դատավորին և Բարձրագույն դատական խորհրդի անդամին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ Բարձրագույն դատական խորհրդի որոշումներն ընդունվում են խորհրդակցական սենյակում՝ բաց քվեարկությամբ՝ խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ իսկ դատավորի և Բարձրագույն դատական խորհրդի անդամի լիազորությունները դադարեցնելու, ինչպես նաև իր լիազորությունների իրականացման կապակցությամբ դատավորի և Բարձրագույն դատական խորհրդի անդամի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու կամ նրան ազատությունից զրկելու վերաբերյալ համաձայնություն տալու մասին որոշումները՝ խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների առնվազն երկու երրորդով: Եթե քվեարկության արդյունքով որևէ որոշման օգտին բավարար քանակի ձայների բացակայության պատճառով Բարձրագույն դատական խորհուրդը որոշում չի ընդունում, ապա համապատասխան միջնորդությունը մերժելու վերաբերյալ որոշումը համարվում է ընդունված, իսկ որոշումը կազմում և ստորագրում են Բարձրագույն դատական խորհրդի այն անդամները, որոնք քվեարկել են միջնորդությունը մերժելու օգտին:»:

**Հոդված 21.** Օրենքի 95-րդ հոդվածի 6-րդ մասից հանել վերջին նախադասությունը, 4-րդ մասից, 113-րդ հոդվածի 2-րդ մասի 10-րդ կետից, 116-րդ հոդվածի 4-6-րդ մասերից, 128-րդ հոդվածի 4-րդ մասից հանել «կամ պատգամավոր ընտրված լինելու» բառերը:

**Հոդված 22.** Օրենքի 97-րդ հոդվածի 1-ին մասում՝

1) «28» թիվը փոխարինել «25» թվով.

2) 5-րդ կետում «հինգ» բառը փոխարինել «երեք» բառով:

**Հոդված 23**. Օրենքի 98-րդ հոդվածի 2-րդ մասը լրացնել նոր՝ 13.1-րդ կետով.

«13.1) բարեվարքության վերաբերյալ հարցաթերթիկ.»:

**Հոդված 24.** Օրենքի 104-րդ հոդվածում՝

1) 3-րդ մասում «առաջարկում է» բառերից հետո լրացնել «գործունեությունը գնահատված լինելու դեպքում գնահատման վերջին արդյունքներով՝ բարձր կամ լավ գնահատական ստացած» բառերը.

2) 6-րդ մասում լրացնել նոր նախադասություն.

«Գնահատման հանձնաժողովի անդամների անունները ենթակա չեն հրապարակման մինչև քննության արդյունքների հրապարակումը:»:

**Հոդված 25.** Օրենքի 105-րդ հոդվածի 3-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«3. Հավակնորդների գրավոր աշխատանքները գնահատման հանձնաժողովին տրամադրվում են անանուն՝ ծածկագրված (ապանձնավորված) վիճակում: Գնահատման հանձնաժողովի անդամները պետք է ապահովված լինեն գնահատման չափորոշիչներին համապատասխան միավորների սանդղակով և ուղենիշային տիպային պատասխաններով: Գնահատման հանձնաժողովի անդամները չպետք է գնահատման ընթացքում միմյանց հետ քննարկեն գրավոր աշխատանքին տրվող գնահատականները և դրանց հիմնավորումները: Հանձնաժողովի անդամները գնահատական նշանակելիս հաշվի են առնում սույն օրենսգրքի 103-րդ հոդվածով սահմանված հատկանիշները, որոնց պետք է համապատասխանեն Բարձրագույն դատական խորհրդի սահմանած գնահատման չափորոշիչները:»:

**Հոդված 26.** Օրենքը լրացնել նոր՝ 105.1-ին հոդվածով.

« **Հոդված 105.1. Գրավոր քննության արդյունքների բողոքարկումը**

1. Գրավոր քննության արդյունքները կարող են բողոքարկվել Բողոքարկման հանձնաժողով՝ դրանք հրապարակելուց հետո տասնհինգօրյա ժամկետում:

2. Համապատասխան մասնագիտացմամբ բողոքարկման հանձնաժողովը կազմավորվում է տվյալ մասնագիտացմամբ քննության արդյունքների դեմ առաջին բողոքը ստանալուց հետո հնգօրյա ժամկետում՝ երկու դատավորի և մեկ իրավաբան գիտնականի կազմով, որոնք վիճակահանությամբ ընտրվում են Ուսումնական հարցերի հանձնաժողովի կողմից առաջարկված տվյալ մասնագիտացման 5 և Լիազոր մարմնի կողմից առաջարկված իրավունքի համապատասխան բնագավառի առնվազն 3 իրավաբան գիտնականի թեկնածուների կազմից՝ նրանց համաձայնությամբ: Գնահատման հանձնաժողովի անդամները չեն կարող ընդգրկվել Բողոքարկման հանձնաժողովի կազմում:

3. Բողոքարկման հանձնաժողովի կազմում ընդգրկվելու, հանձնաժողովի աշխատանքն իրականացնելու կարգի, հանձնաժողովի անդամների վարձատրության, նրանց լիազորությունների դադարեցման, ինչպես նաև հանձնաժողովի գործունեության դադարման նկատմամբ կիրառվում են սույն օրենսգրքի 104-րդ հոդվածով, իսկ բողոքարկման արդյունքների վերանայման նկատմամբ 105-րդ հոդվածով սահմանված դրույթները:

4. Բողոքարկման հանձնաժողովը բողոքը քննում և դրա վերաբերյալ կայացնում է որոշում բողոքարկման համար սահմանված ժամկետը լրանալուց հետո հնգօրյա ժամկետում: Բողոքարկման հանձնաժողովը կարող է քննության արդյունքների դեմ բերված բողոքը մերժել կամ բավարարել՝ մասնակի կամ ամբողջությամբ:

5. Գրավոր քննության արդյունքները դատական կարգով կարող են բողոքարկվել ընթացակարգային խախտումների հիմքով, եթե դրանք բողոքարկվել են Բողոքարկման հանձնաժողովին:»:

**Հոդված 27.** Օրենքի 106-րդ հոդվածի 1-ին մասում «հինգ» բառը փոխարինել «երեք» բառով, իսկ «ութ» բառը՝ «վեց» բառով:

**Հոդված 28**. Օրենքի 107-րդ հոդվածում՝

1) 1-ին մասում «գրավոր» բառից առաջ լրացնել «Բողոքարկման արդյունքները հրապարակելուց, իսկ բողոքներ չլինելու դեպքում՝» բառերը.

2) լրացնել նոր 7.1-րդ մաս.

«8.1. Միասնական համալրված ցուցակը ստանալու օրը Բարձրագույն դատական խորհուրդը ցուցակում ներառված հավակնորդների բարեվարքության վերաբերյալ հարցաթերթիկները ներկայացնում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով՝ մեկ ամսյա ժամկետում դրանց վերաբերյալ խորհրդատվական բնույթի եզրակացություն ստանալու նպատակով:»:

**Հոդված 29**. Օրենքի 108-րդ հոդվածում՝

1) 1-ին մասում լրացնել նոր նախադասություն.

«Այս փուլում Բարձրագույն դատական խորհուրդն ուսումնասիրում է նաև հավակնորդի ներկայացրած հարցաթերթիկի «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքով սահմանված կարգով իրականացված ուսումնասիրությունների հիման վրա Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից տրամադրած՝ հավակնորդի բարեվարքության վերաբերյալ խորհրդատվական բնույթի եզրակացությունը:».

2) լրացնել նոր 1.1.-ին մաս.

«1.1. Հարցազրույցից առաջ՝ հինգ օրվա ընթացքում, հավակնորդներն անցնում են հոգեբանական թեստավորում: Հոգեբանական թեստը կազմվում է սույն հոդվածի 1-ին մասում նախատեսված հատկանիշները գնահատելու նպատակով, և դրա արդյունքը ստացվում է ըստ նախապես մշակված էլեկտրոնային համակարգի: Բարձրագույն դատական խորհուրդը հաստատում է հոգեբանական թեստավորման չափանիշները և անցկացման կարգը, որի հիման վրա թեստավորման անցկացման համար անհրաժեշտ պայմաններն ապահովում է Լիազոր մարմինը: Թեստի արդյունքներն ունեն խորհրդատվական նշանակություն, տրամադրվում են հավակնորդին և Բարձրագույն դատական խորհրդին:».

3) լրացնել նոր 8-րդ մաս.

«8. Դատավորների թեկնածուների հավակնորդների ցուցակը կազմելու համար քվեարկությունն իրականացնելիս Բարձրագույն դատական խորհրդի անդամները հաշվի են առնում որակավորման գրավոր քննության և հարցազրույցի արդյունքները, հոգեբանական թեստի արդյունքները և Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի տրամադրած՝ հավակնորդի բարեվարքության վերաբերյալ խորհրդատվական բնույթի եզրակացությունը:»:

**Հոդված 30**. Օրենքի 109-րդ հոդվածում՝

1) 1-ին մասում «գաղտնի» բառը փոխարինել «բաց» բառով :

2) 2-րդ մասն ուժը կորցրած ճանաչել.

3) 3-րդ մասից հանել վերջին նախադասությունը.

4) 7-րդ մասից հանել վերջին նախադասությունը:

**Հոդված 31**. Օրենքի 111-րդ հոդվածի 6-րդ մասում, 113-րդ հոդվածի 5-րդ մասում, 117-րդ հոդվածի 4-րդ մասում, 119-րդ հոդվածի 2-րդ մասում, 120-րդ հոդվածի 3-րդ մասում, 124-րդ հոդվածի 3-րդ մասում «գաղտնի» բառը փոխարինել «բաց» բառով:

**Հոդված 32**. Օրենքի 121-րդ հոդվածում՝

1) 1-ին մասից հանել «տվյալ դատարանում ունեն դատավորի ոչ պակաս, քան երեք տարվա փորձառություն,» բառերը.

2) 2-րդ մասն ուժը կորցրած ճանաչել.

3) 5-րդ մասից հանել «գաղտնի» բառը և 2-րդ նախադասությունը:

**Հոդված 33**. Օրենքի 123-րդ հոդվածի 6-րդ մասի 3-րդ կետում «վերջին 10 տարիների ընթացքում առնվազն ութ» բառերը փոխարինել «վերջին ութ տարիների ընթացքում առնվազն վեց» բառերով:

**Հոդված 34**. Օրենքի 124-րդ հոդվածում՝

1) ուժը կորցրած ճանաչել 4-րդ մասը.

2) 5-րդ և 8-րդ մասերից հանել վերջին նախադասությունները:

**Հոդված 35**. Օրենքի 132-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«3) իրավագիտության բնագավառում գիտական աստիճան ունեցող և վերջին 10 տարիների ընթացքում առնվազն 8 տարի բարձրագույն ուսումնական հաստատությունում իրավունք դասավանդած կամ գիտական հաստատությունում գիտական աշխատանք կատարած անձը:»:

**Հոդված 36**. Օրենքի 133-րդ հոդվածում՝

1) ուժը կորցրած ճանաչել 4-րդ մասը.

2) 5-րդ և 8-րդ մասերից հանել վերջին նախադասությունները:

**Հոդված 37**. Օրենքի 134-րդ հոդվածում՝

1) 1-ին մասից հանել «տվյալ դատարանում ունեն ոչ պակաս, քան երեք տարվա դատավորի փորձառություն, » բառերը.

2)2-րդ մասն ուժը կորցրած ճանաչել.

3) 5-րդ մասում «գաղտնի» բառը փոխարինել «բաց» բառով.

4) 6-րդ մասը ճանաչել ուժը կորցրած.

5) 7-րդ մասից հանել վերջին նախադասությունը:

**Հոդված 38**. Օրենքի 135-րդ հոդվածում՝

1) 1-ին մասից հանել «տվյալ դատարանում ունեն ոչ պակաս, քան երեք տարվա դատավորի փորձառություն,» բառերը.

2) 2-րդ մասն ուժը կորցրած ճանաչել.

3) 5-րդ մասում «գաղտնի» բառը փոխարինել «բաց» բառով.

4) 6-րդ մասը ճանաչել ուժը կորցրած.

5) 7-րդ մասից հանել վերջին նախադասությունը:

**Հոդված 39**. Օրենքի 18-րդ գլուխը շարադրել նոր խմբագրությամբ.

**«ԳԼՈՒԽ 18**

***ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ***

**Հոդված 136. Դատավորների գործունեության գնահատման նպատակը**

1. Դատավորի գործունեությունը ենթակա է գնահատման:

2. Դատավորների գործունեության գնահատման նպատակն է՝

1) առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների ցուցակները կազմելիս նպաստել լավագույն թեկնածուների ընտրությանը.

2) նպաստել դատավորների վերապատրաստման ուղղությունների ընտրությանը.

3) բացահայտել դատավորի աշխատանքի արդյունավետությունը բարելավելու ուղիները.

4) նպաստել դատավորի ինքնակատարելագործմանը.

5) նպաստել դատարանի գործունեության արդյունավետության բարելավմանը:

3. Դատավորի գործունեության գնահատման արդյունքները տրամադրվում են՝

1) Ուսումնական հարցերի հանձնաժողովին՝ դատավորների վերապատրաստման ուղղություններն ընտրելու.

2) գնահատվող դատավորին՝ իր աշխատանքի արդյունավետությունը բարելավելու և ինքնակատարելագործվելու.

3) Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովին՝ դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու հարցը քննարկելու համար.

4) դատարանի նախագահին՝ դատարանի գործունեության արդյունավետությունը բարելավելու նպատակով:

4. Բացառությամբ սույն օրենսգրքով նախատեսված դեպքերի, դատավորների գործունեության գնահատման արդյունքները և այդ կապակցությամբ ձեռք բերված տվյալներն ու տեղեկությունները գաղտնի են:

**Հոդված 137. Դատավորի գործունեության գնահատման տեսակները**

1. Դատավորի գործունեությունը ենթակա է հերթական գնահատման՝ յուրաքանչյուր չորս տարին մեկ անգամ, իսկ դատավորի նախաձեռնությամբ կամ սույն օրենսգրքով սահմանված դեպքերում՝ արտահերթ:

2. Դատավորի նախաձեռնությամբ արտահերթ գնահատում չի իրականացվում, եթե դատավորի գործունեությունը վերջին երկու տարվա ընթացքում գնահատվել է:

3. Դատավորի գործունեության գնահատումն իրականացվում է Բարձրագույն դատական խորհրդի սահմանած կարգով և ժամկետներում:

**Հոդված 138. Դատավորների գործունեության գնահատման չափանիշները**

1. Դատավորների գործունեությունը գնահատվում է դատավորի աշխատանքի որակն ու արդյունավետությունը, ինչպես նաև դատավորի արհեստավարժությունն ու վարքագիծը բնութագրող սույն հոդվածով սահմանված չափանիշների հիման վրա, եթե հնարավոր է տվյալ դատավորի գնահատումն իրականացնել այդ չափանիշների հիման վրա:

2. Դատավորի աշխատանքի որակի և արհեստավարժության գնահատման չափանիշներն են՝

1) դատական ակտը հիմնավորելու կարողությունը.

2) դատական նիստը կառավարելու և օրենքով սահմանված կարգով անցկացնելու կարողությունը:

3. Դատավորի աշխատանքի արդյունավետության գնահատման չափանիշներն են՝

1) աշխատանքային ծանրաբեռնվածության արդյունավետ կառավարման ունակությունը և աշխատանքի պլանավորումը.

2) ողջամիտ ժամկետում գործեր քննելն ու դատական ակտեր կայացնելը.

3) դատավորի կողմից առանձին դատավարական գործողությունների կատարման համար օրենքով սահմանված ժամկետների պահպանումը.

4) արդյունավետ աշխատամիջավայր ապահովելու կարողությունը:

4. Դատավորի էթիկայի և վարքագծի կանոնի գնահատման չափանիշներն են՝

1) վարքագծի և էթիկայի կանոնների պահպանումը.

2) դատարանի հանրային ընկալմանն ու դատարանի նկատմամբ վստահությանը նպաստելը, այլ դատավորների և դատարանի աշխատակազմի նկատմամբ դրսևորած վերաբերմունքը:

5. Սույն հոդվածով սահմանված գնահատման չափանիշներով գնահատման համար հանձնաժողովը պետք է հաշվի առնի դատավորի քննած գործերի առնվազն 10 դատական նիստի ձայնային արձանագրություններ (բացակայության դեպքում՝ պարզ թղթային արձանագրություններ) և առնվազն 10 գործն ըստ էության լուծող դատական ակտեր (պատահական ընտրությամբ):

**Հոդված 139. Դատավորների գործունեության գնահատման կարգը**

1. Դատավորների գործունեության գնահատումն իրականացնում է Դատավորների գործունեության գնահատման հանձնաժողովը՝ սույն օրենսգրքով սահմանված չափանիշների հիման վրա:

2. Բարձրագույն դատական խորհուրդը սահմանում է դատավորների գործունեության գնահատման մեթոդաբանությունը՝ ներառյալ սույն օրենսգրքի 138-րդ հոդվածով սահմանված չափանիշների գնահատման ցուցիչները, գնահատման համար անհրաժեշտ տվյալների հավաքման կարգը և դատավորների գործունեության գնահատման համար անհրաժեշտ այլ մանրամասները:

3. Դատավորների գործունեության գնահատման մեթոդաբանությունը սահմանելիս դատավորի գործունեության գնահատման համար առաջնահերթություն է տրվում սույն օրենսգրքի 138-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով սահմանված չափանիշներին, որոնք դատավորին տրվող գնահատականի ձևավորման համար ունեն որոշիչ նշանակություն:

4. Բարձրագույն դատական խորհուրդը սահմանում է դատավորների գործունեությունը գնահատելու հերթական ժամանակացույցը՝ ըստ համապատասխան տարիների և դատավորների:

**Հոդված 140. Դատավորների գործունեության գնահատման արդյունքների ամփոփումը**

1. Գնահատման արդյունքների վերաբերյալ կազմվում է որոշման նախագիծ, որը ներառում է գնահատման արդյունքի ամփոփագիր:

2. Գնահատման արդյունքների վերաբերյալ որոշման նախագիծն ուղարկվում է դատավորին, որն իրավունք ունի այն ստանալու պահից յոթնօրյա ժամկետում ներկայացնելու նախագծի վերաբերյալ իր նկատառումները:

3. Դատավորների գործունեության գնահատման հանձնաժողովն ուսումնասիրում է գնահատման արդյունքների վերաբերյալ դատավորի նկատառումները և որոշում կայացնում գնահատման արդյունքների վերաբերյալ:

4. Դատավորների գործունեության գնահատման հանձնաժողովը գնահատման ընդհանուր արդյունքների հիման վրա դատավորների գործունեությունը գնահատում է բարձր, լավ, միջին կամ ցածր՝ հիմք ընդունելով Բարձագույն դատական խորհրդի կողմից սահմանված գնահատման սանդղակները, որոնք, ի թիվս այլնի, ներառում են յուրաքանչյուր չափանիշով դատավորի գործունեության գնահատման ցուցիչները, յուրաքանչյուր ցուցիչով միավորը որոշելու մեթոդը, միավորների առավելագույն չափը, ինչպես նաև տվյալ ցուցիչով դատավորի գործունեության

գնահատման հիմք հանդիսացող փաստաթղթավորված տվյալների շրջանակը և դրանք հավաքելու կարգը:

5. Դատավորի գործունեության գնահատականը ձևավորվում է գնահատման բոլոր չափանիշներով հանձնաժողովի յուրաքանչյուր անդամի կողմից դատավորին նշանակված գնահատականների միջինով:

6. Դատավորների գործունեության գնահատման հանձնաժողովի դատավոր անդամը չի մասնակցում իր գործունեության գնահատմանը և արդյունքների ամփոփմանը:

**Հոդված 140.1. Դատավորների գործունեության գնահատման հետևանքները**

1. Գնահատման ընդհանուր արդյունքներով դատավորի գործունեությունը ցածր կամ միջին գնահատվելու դեպքում Դատավորների գործունեության գնահատման հանձնաժողովը որոշում է կայացնում դատավորին լրացուցիչ վերապատրաստման ուղարկելու մասին՝ սահմանելով այն չափանիշները, որոնցով նրա հմտությունները կատարելագործվելու անհրաժեշտություն ունեն:

2. Գնահատման ընդհանուր արդյունքներով ցածր կամ միջին գնահատված դատավորի համար սույն հոդվածի 1-ին մասով սահմանված լրացուցիչ վերապատրաստումն անցնելուց հետո եռամսյա ժամկետում կազմակերպվում է արտահերթ գնահատում:

3. Սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված արտահերթ գնահատման դեպքում սույն օրենսգրքի 138-րդ հոդվածով սահմանված չափանիշների գնահատումն իրականացվում է Բարձրագույն դատական խորհրդի կողմից սահմանված կարգով:

4. Դատավորների գործունեության գնահատման հանձնաժողովի կողմից դատավորի գործունեության գնահատման արդյունքում սույն օրենսգրքի 142-րդ հոդվածով նախատեսված՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու առերևույթ հիմքեր հայտնաբերելու դեպքում հանձնաժողովը դիմում է Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողով՝ դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու հարցը քննարկելու համար:»:

**Հոդված 40.** Օրենքի 142-րդ հոդվածում՝

1) 1-ին մասում՝

ա) 1-ին կետից հանել «ակնհայտ և կոպիտ» բառերը, իսկ «խախտումը» բառից հետո լրացնել «, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ.» բառերը.

բ) 2-րդ կետում «կանոնները» բառից հետո հանել «կոպիտ» բառը.

գ) 3-րդ և 4-րդ կետերն ուժը կորցրած ճանաչել:

2) 2-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«2. Արարքը չի համարվում կարգապահական խախտում, եթե այն, թեև ձևականորեն պարունակում է սույն օրենսգրքով սահմանված՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերի հատկանիշներ, սակայն իր նվազ կարևորության պատճառով կասկածի տակ չի դնում տվյալ դատավորի համապատասխանությունը դատավորի կարգավիճակին և իր էությամբ չի կարող հեղինակազրկել դատական իշխանությունը:»:

3) 3-րդ մասը ուժը կորցրած ճանաչել.

4) 5-րդ մասում «իրադրությունում» բառից հետո լրացնել «ակնհայտորեն» բառը.

5) 6-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«6. Էական կարգապահական խախտում է՝

1) սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված խախտումը, որը հանգեցրել է Սահմանադրությամբ կամ Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերով ամրագրված՝ մարդու իրավունքների և (կամ) ազատությունների հիմնարար խախտման կամ հեղինակազրկում է դատական իշխանությունը.

2) սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված խախտումը, որը դրսևորվել է 69-րդ հոդվածի 1-ին մասի 1-4-րդ, 8-9-րդ, 11-12-րդ, 15-16-րդ կետերով և 70-րդ հոդվածի 2-րդ մասի 1-3-րդ, 7-8-րդ, 13-14-րդ և 18-րդ կետերով նախատեսված դատավորի պարտականությունների խախտմամբ, և պայմանավորված կատարման հանգամանքներով և (կամ) առաջացրած հետևանքներով՝ համատեղելի չէ դատավորի կարգավիճակի հետ.

3) երկու նկատողություն կամ մեկ խիստ նկատողություն ունեցող դատավորի կողմից կարգապահական խախտում կատարելը:»:

**Հոդված 41.** Օրենքի 144-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ.՝

**Հոդված 144. Կարգապահական պատասխանատվության ենթարկելու նպատակով վարույթ հարուցելու ժամկետները**

1. Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու նպատակով վարույթը կարող է հարուցվել՝

1) արդարադատություն կամ որպես դատարան՝ օրենքով նախատեսված այլ լիազորություններ իրականացնելիս նյութական կամ դատավարական իրավունքի նորմի դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ խախտման հիմքով՝ Լիազոր մարմնի կողմից խախտումը հայտնաբերելուց հետո՝ մեկ տարվա ժամկետում: Սույն կետով նախատեսված հիմքով կարգապահական վարույթ չի կարող հարուցվել, եթե եզրափակիչ դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելուց հետո անցել է ութ տարի.

2) դատավորի կողմից սույն օրենսգրքով սահմանված՝ դատավորի վարքագծի կանոնները դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ խախտելու հիմքով՝ Լիազոր մարմնի կողմից

խախտումը հայտնաբերելուց հետո՝ եռամսյա ժամկետում, բայց ոչ ուշ, քան խախտումը կատարելուց մեկ տարի հետո՝ բացառությամբ սույն օրենսգրքի 69-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ և 16-րդ կետերով նախատեսված վարքագծի կանոնների խախտումների.

3) դատավորի կողմից սույն օրենսգրքի 69-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ և 16-րդ կետերով նախատեսված վարքագծի կանոնները դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ խախտելու հիմքով՝ Լիազոր մարմնի կողմից խախտումը հայտնաբերելուց հետո՝ մեկ տարվա ժամկետում, բայց ոչ ուշ, քան խախտումը կատարելուց երեք տարի հետո:

2. Եթե սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված խախտումը հայտնաբերվել է մինչև տվյալ գործով եզրափակիչ դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը, ապա նույն կետով նախատեսված մեկ տարվա ժամկետը հաշվարկվում է տվյալ ակտի օրինական ուժի մեջ մտնելու պահից, իսկ եթե դատավորի կողմից թույլ են տրվել դատավարական նորմերի այնպիսի խախտումներ, որոնք հանգեցնում են դատական պաշտպանության իրավունքի խախտման և արդարադատության խաթարման, ապա վարույթ կարող է հարուցվել մինչև տվյալ եզրափակիչ դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը:»:

**Հոդված 42.** Օրենքի 145-րդ հոդվածում՝

1) 1-ին մասում լրացնել նոր՝ 3-րդ կետ.

«3) Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը՝ սույն հոդվածի 1.1.-ին կետով նախատեսված դեպքերում:».

2) լրացնել նոր՝ 1.1.-ին մաս.

«1.1. Սույն օրենսգրքի 69-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ և 16-րդ կետերով նախատեսված վարքագծի կանոնների խախտման առնչությամբ կարգապահական վարույթ կարող է հարուցել միայն Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը՝ «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի» մասին օրենքով սահմանված դեպքերում և կարգով:»:

**Հոդված 43.** Օրենքի 146-րդ հոդվածում՝

1) 1-ին մասում լրացնել նոր՝ 4-րդ կետ.

«4) վարույթ հարուցող մարմնի կողմից մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունների խախտում արձանագրող՝ Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային դատարանի կամ այլ միջազգային ատյանի կայացրած ակտի ուսումնասիրության արդյունքում առերևույթ կարգապահական խախտման հատկանիշներ պարունակող արարքի հայտնաբերումը:».

2)4 -րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«4. Վարույթ հարուցող մարմինը կատարված ուսումնասիրությունների արդյունքում կայացնում է կարգապահական վարույթ հարուցելու կամ չհարուցելու մասին որոշում:

3) 5-րդ մասում «չհարուցելու հիմքերը» բառից հետո լրացնել «երեք աշխատանքային օրվա ընթացքում ուղարկելով հաղորդում ներկայացրած անձին» բառերը.

4) 6-րդ մասում՝

ա. 1-ին կետում «հարուցված» բառից հետո լրացնել «կարգապահական» բառը.

բ. լրացնել նոր՝ 4-րդ կետ.

«4) դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերն առերևույթ բացակայում են:»:

**Հոդված 44.** Օրենքի 147-րդ հոդվածում՝

1) 1-ին մասում «վեց շաբաթից» բառերը փոխարինել «երկու ամսից» բառերով.

2) 3-րդ մասի 4-րդ կետում «անձին» բառից հետո լրացնել «, ֆիզիկական և իրավաբանական անձանց» բառերը, «տեղեկությունների» բառը փոխարինել «տեղեկություններ և նյութեր» բառերով.

3) 6-րդ մասը լրացնել նոր՝ 6-րդ կետով.

«6) առկա է սույն օրենսգրքի 142-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված հիմք:»:

**Հոդված 45.** Օրենքի 149-րդ հոդվածում

1) 1-ին մասում լրացնել նոր՝ 3.1-ին և 3.2.-րդ կետեր.

«3.1) առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների ցուցակի հերթական և արտահերթ համալրման ժամանակ ցուցակում ընդգրկվելու արգելք՝ երկու տարի ժամկետով.

3.2) դատարանի նախագահի կամ Վճռաբեկ դատարանի պալատի նախագահի պաշտոնից ազատում:».

2) լրացնել նոր 1.1-րդ մաս.

«1.1. Սույն հոդվածի 1-ին մասի 3.2-րդ կետով նախատեսված կարգապահական տույժը չի կարող կիրառվել սույն օրենսգրքի 142-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված հիմքով դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելիս:»

3) 2-րդ մասում «հետևանքները,» բառից հետո լրացնել «դիտավորությունը կամ կոպիտ անփութությունը,» բառերը.

4) 3-րդ մասում «Եթե» բառից հետո լրացնել «առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների ցուցակի հերթական համալրման ժամանակ ցուցակում ընդգրկվելու արգելք կիրառելու կամ, դատարանի նախագահի կամ Վճռաբեկ դատարանի պալատի նախագահի պաշտոնից ազատվելու կամ,» բառերը:

**Հոդված 46.** Օրենքի 150-րդ հոդվածում՝

1) 1-ին մասում «մեկամսյա» բառը փոխարինել «եռամսյա» բառով.

2) 2-րդ մասում «մեկ ամսով» բառերը փոխարինել «երեք ամսով» բառերով.

3) լրացնել նոր՝ 3-րդ և 4-րդ մասեր.

«3. Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի քննությունը կասեցվում է, եթե նույն փաստերի առթիվ հարուցվել է քրեական գործ և վերսկսվում է քրեական վարույթի ավարտից հետո:

4.Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի քննությունը Բարձրագույն դատական խորհրդի կողմից կարճվում է, եթե կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի քննությունը վերսկսելուց հետո առկա են սույն օրենսգրքի 160-րդ հոդվածով նախատեսված դատավորի լիազորությունների դադարման հիմքեր: Քրեական գործով օրինական ուժի մեջ մտած դատավճիռը կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը քննելիս պարտադիր է Բարձրագույն դատական խորհրդի համար միայն այն փաստերով, որոնցով հաստատված են որոշակի գործողությունների կատարումը և դրանք կատարած անձինք:»:

**Հոդված 47.** Օրենքի 151-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ՝

**«Հոդված 151. Բարձրագույն դատական խորհրդում դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի քննության ընթացքը**

1. Բարձրագույն դատական խորհրդում հարցի քննությունն սկսվում է հարցի էության և կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին միջնորդության վերաբերյալ վարույթ հարուցած անձի զեկուցմամբ: Եթե դատավորի նկատմամբ կարգապահական վարույթը հարուցել է Լիազոր մարմինը, ապա վերջինս, կամ նրա տեղակալը պարտավոր է ներկա լինել Բարձրագույն դատական խորհրդի նիստին: Եթե կարգապահական վարույթը հարուցվել է Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի կողմից, ապա Բարձրագույն դատական խորհրդի նիստին կարգապահական խախտման մասին միջնորդությունը զեկուցում է Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի նախագահը կամ Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի հանձնարարությամբ՝ դրա անդամներից մեկը: Եթե կարգապահական վարույթը հարուցվել է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից, ապա Բարձրագույն դատական խորհրդի նիստին կարգապահական խախտման մասին միջնորդությունը զեկուցում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի նախագահը կամ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի հանձնարարությամբ՝ դրա անդամներից մեկը:

2. Այն դեպքում, երբ կարգապահական վարույթի նյութերը Բարձրագույն դատական խորհուրդ ուղարկելուց հետո վարույթ հարուցած մարմնին հայտնի են դարձել հանգամանքներ, որոնք բարելավում

են դատավորի վիճակը կամ բացառում նրան կարգապահական պատասխանատվության ենթարկելը, վարույթ հարուցած մարմինը պարտավոր է այդ մասին հայտնել Բարձրագույն դատական խորհրդին:

3. Վարույթ հարուցած մարմնի զեկուցումից հետո Բարձրագույն դատական խորհուրդը լսում է այն դատավորին, որի նկատմամբ վարույթ է հարուցվել: Բարձրագույն դատական խորհրդի անդամները և վարույթը հարուցած մարմնի ներկայացուցիչը կարող են հարցեր ուղղել դատավորին, որոնց վերջինս կարող է պատասխանել կամ հրաժարվել դրանց պատասխանելուց: Դատավորին լսելուց հետո Բարձրագույն դատական խորհուրդը անցնում է վարույթի նյութերի հետազոտմանը:

4. Հարցի լուծման համար նշանակություն ունեցող փաստերի շրջանակը որոշելուց հետո Բարձրագույն դատական խորհուրդն իրավունք ունի՝

1) դատավորի, կարգապահական վարույթ հարուցած մարմնի միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ դատավորից, կարգապահական վարույթը հարուցած մարմնից, պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից (դրանց պաշտոնատար անձանցից), ինչպես նաև ֆիզիկական և իրավաբանական անձանցից պահանջել ներկայացնել հարցի քննության համար նշանակություն ունեցող ապացույցներ, որոնք գտնվում են տվյալ անձանց ազդեցության ոլորտում՝ սահմանելով ժամկետ դրանք Բարձրագույն դատական խորհուրդ ներկայացնելու համար, իսկ որոշումը կամովին չկատարելու դեպքում այն ներկայացնել կատարման «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքով սահմանված կարգով:

2) դատավորի, կարգապահական վարույթ հարուցած մարմնի միջնորդությամբ կամ սեփական նախաձեռնությամբ հրավիրել վկաներ,

3) դատավորի, կարգապահական վարույթ հարուցած մարմնի միջնորդությամբ կամ սեփական նախաձեռնությամբ նշանակել փորձաքննություն՝ քննության համար նշանակություն ունեցող հարցերի պարզաբանման նպատակով:

5. Վկաների չներկայանալու դեպքում Բարձրագույն դատական խորհուրդն իրավունք ունի որոշում կայացնելու վկային հարկադրաբար ներկայացնելու վերաբերյալ: Հարկադրաբար ներկայացնելու վերաբերյալ որոշումը կատարվում է «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքով սահմանված կարգով:

6. Բարձրագույն դատական խորհուրդը գործով ցուցմունք տվող անձանց նախազգուշացնում է ցուցմունք տալուց հրաժարվելու կամ սուտ ցուցմունք տալու, իսկ փորձագետին՝ ակնհայտ կեղծ եզրակացություն տալու համար սահմանված պատասխանատվության մասին:

7. Հարցի քննության համար հրավիրված վկային առաջինը հարցեր է տալիս այն կողմը, որի միջնորդությամբ հրավիրվել է վկան, ապա մյուս կողմը, իսկ վերջում՝ Բարձրագույն դատական խորհուրդը: Եթե վկան հրավիրվել է Բարձրագույն դատական խորհրդի նախաձեռնությամբ, ապա առաջինը հարցեր է տալիս Բարձրագույն դատական խորհուրդը, այնուհետև կողմերը՝ ըստ Բարձրագույն դատական խորհրդի սահմանած հերթականության:

8. Վկան իրավունք ունի հրաժարվել ցուցմունք տալ առանձին հարցերի վերաբերյալ, եթե ողջամտորեն ենթադրում է, որ այն հետագայում կարող է օգտագործվել իր, իր ամուսնու կամ իր մերձավոր ազգականի դեմ:

9. Վարույթի նյութերի հետազոտումից հետո Բարձրագույն դատական խորհուրդը լսում է նիստին մասնակցող անձանց ամփոփիչ ելույթները, որից հետո հարցի քննությունը հայտարարվում է ավարտված: Հարցի քննությունն ավարտված հայտարարելուց հետո Բարձրագույն դատական խորհուրդը հայտարարում է որոշման հրապարակման օրը, վայրը և ժամը:

10. Հարցի քննությունն ավարտված հայտարարելուց հետո Բարձրագույն դատական խորհուրդը հեռանում է որոշում կայացնելու:»:

**Հոդված 48.** Օրենքի 155-րդ հոդվածում՝

1) 7-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«7. Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի մասին Բարձրագույն դատական խորհրդի որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից: Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի մասին Բարձրագույն դատական խորհրդի որոշումը ենթակա է բողոքարկման այն պահից սկսած մեկամսյա ժամկետում, երբ բողոք բերող անձն (մարմինը) իմացել է կամ կարող էր իմանալ սույն օրենսգրքի 156.1-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ապացույցների կամ հանգամանքների մասին:».

2) 8-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:

**Հոդված 49.** Օրենքում լրացնել նոր՝ 156.1-ին հոդված.

**«Հոդված 156.1. Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ կամ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու միջնորդությունը մերժելու որոշումը բողոքարկելը**

1. Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ կամ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու միջնորդությունը մերժելու որոշման դեմ համապատասխանաբար դատավորի կամ կարգապահական վարույթ հարուցած մարմնի բողոքը քննում է Բարձրագույն դատական խորհուրդը, եթե ի հայտ է եկել այնպիսի էական ապացույց կամ հանգամանք, որը բողոքարկողը նախկինում չի ներկայացրել իր կամքից անկախ հանգամանքներով և որը ողջամտորեն կարող էր ազդել որոշման վրա:

2. Բարձրագույն դատարան խորհուրդը բողոքը ստանալուց հետո այն անմիջապես ուղարկում է մյուս կողմին, որը կարող է Բարձրագույն դատական խորհուրդ ներկայացնել բողոքի պատասխան այն ստանալու պահից 10 օրվա ընթացքում:

3. Բարձրագույն դատական խորհուրդը Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ կամ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու միջնորդությունը մերժելու որոշման դեմ ներկայացված բողոքները քննում և դրանց վերաբերյալ որոշումները կայացնում է գրավոր ընթացակարգով, բացառությամբ այն դեպքերի, երբ գալիս է եզրահանգման, որ անհրաժեշտ է բողոքի քննությունն իրականացնել նիստում: Բողոքը դատական նիստում քննելու մասին կայացվում է որոշում:

4. Բողոքը դատական նիստում քննելու վերաբերյալ որոշում կայացվելու դեպքում կողմերը ծանուցվում են նիստի ժամանակի և վայրի մասին: Նրանց չներկայանալն արգելք չէ բողոքի քննության համար: Բողոքի քննությունը դատական նիստում սկսվում է հարցը զեկուցող անդամի զեկուցումով, ով ներկայացնում է բողոքը և բողոքի պատասխանի փաստարկները: Բարձրագույն դատական խորհրդի անդամներն իրավունք ունեն հարցեր տալու զեկուցողին և նիստին ներկայացած կողմերին, որից հետո բողոքի քննությունը հայտարարվում է ավարտված:

5. Բողոքի քննության ժամանակ Բարձրագույն դատական խորհուրդը բողոքարկվող որոշումը վերանայում է միայն բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում:

6. Բողոքի քննությունը կատարվում և որոշումը կայացվում է բողոքը ստանալուց հետո երկամսյա ժամկետում:

7. Բողոքի քննության արդյունքներով Բարձրագույն դատական խորհուրդը կայացնում է բողոքարկվող որոշումն անփոփոխ թողնելու կամ որոշումը մասնակի կամ ամբողջությամբ վերացնելու մասին որոշում: Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և վերջնական է:»:

**Հոդված 50.** Օրենքի 159-րդ հոդվածում՝

1) 1-ին մասում «18-րդ գլխի» բառերը փոխարինել «19-րդ գլխի» բառերով և հանել «հարուցման և իրականացման» բառերը.

2) լրացնել նոր՝ 2.1. մաս.

«2.1. «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված անհամատեղելիության պահանջների խախտման հիմքով դատավորի լիազորությունները կարող են դադարեցվել՝ հաշվի առնելով Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի՝ Բարձրագույն դատական խորհուրդ ներկայացրած եզրակացությունը:»:

**Հոդված 51.** Օրենքի 165-րդ հոդվածում լրացնել նոր՝ 1.1.-ին մաս.

«1.1. Դատավորի նկատմամբ ոչ իր լիազորությունների իրականացման կապակցությամբ քրեական հետապնդում հարուցելու դեպքում Գլխավոր դատախազն այդ մասին անհապաղ տեղեկացնում է Բարձրագույն դատական խորհրդին:»:

**Հոդված 52.** Օրենքի 166-րդ հոդվածի 27-րդ մասը ճանաչել ուժը կորցրած:

**Հոդված 53. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ**

1. Սույն օրենքը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը, բացառությամբ սույն հոդվածով նախատեսված դեպքերի:

2. Սույն օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ կետը և 39-րդ հոդվածն ուժի մեջ են մտնում Դատավորների գործունեության գնահատման հանձնաժողովի ձևավորման պահից:

3. Սույն օրենքի 26-րդ հոդվածն ուժի մեջ է մտնում սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո որակավորման գրավոր քննության արդյունքների դեմ առաջին բողոքը ստանալուց պահից:

4. Սույն օրենքի 29-րդ հոդվածի 2-3-րդ կետերը՝ հոգեբանական թեստավորման մասով, ուժի մեջ են մտնում հոգեբանական թեստավորման համար Բարձրագույն դատական խորհրդի կողմից հաստատված կարգին համապատասխան անհրաժեշտ պայմանների ստեղծման պահից:

5. Սույն օրենքի պաշտոնական հրապարակումից հետո եռամսյա ժամկետում Բարձրագույն դատական խորհուրդը հաստատում է հոգեբանական թեստավորման չափանիշները և անցկացման կարգը:

6. Սույն օրենքի պաշտոնական հրապարակումից հետո վեց ամսվա ընթացքում Լիազոր մարմինն ապահովում է սույն օրենքի 29-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված պայմանները:

7. Սույն օրենքի պաշտոնական հրապարակումից հետո եռամսյա ժամկետում Ընդհանուր ժողովն ընտրում է Ուսումնական հարցերի և Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի անդամներին և նույն օրը գործող Ուսումնական հարցերի և Կարգապահական հարցերի հանձնաժողովի լիազորությունները համարվում են դադարած:

8. Սույն օրենքի պաշտոնական հրապարակումից հետո մեկամսյա ժամկետում Բարձրագույն դատական խորհուրդը հաստատում է Ուսումնական հարցերի և Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի՝ հասարակական կազմակերպությունների կողմից ներկայացվող թեկնածուների մրցույթի անցկացման և ընտրության անցկացման կարգն ու մանրամասները:

9. Սույն օրենքի պաշտոնական հրապարակումից հետո եռամսյա ժամկետում ձևավորվում է Դատավորների գործունեության գնահատման հանձնաժողովը, Բարձրագույն դատական խորհրդի կողմից սահմանվում են դատավորների գործունեության գնահատման մեթոդաբանությունը, գնահատման համար անհրաժեշտ տվյալների հավաքման կարգը և դատավորների գործունեության գնահատման համար անհրաժեշտ այլ մանրամասները, ինչպես նաև դատավորների գործունեությունը գնահատելու հերթական ժամանակացույցը՝ ըստ համապատասխան տարիների և դատավորների:

10. Դատավորների առաջին հերթական գնահատումն իրականացվում է 2020 թվականի հունիսի 1-ից 2024 թվականի հունիսի 1-ն ընկած ժամանակահատվածում:

11. Սույն օրենքի պաշտոնական հրապարակումից հետո վեցամսյա ժամկետում Բարձրագույն դատական խորհուրդը սահմանում է դատավորների աշխատանքային ներքին կարգապահական կանոնները:

12. Մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելն ընտրված Բարձրագույն դատական խորհրդի նախագահը շարունակում է պաշտոնավարել մինչև որպես Բարձրագույն դատական խորհրդի նախագահ իր պաշտոնավարման ժամկետի ավարտը:

13. Եթե մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը դատավորը կամ վարույթ հարուցող մարմինը իմացել է այնպիսի էական ապացույցի կամ հանգամանքի մասին, որը հիմք է Բարձրագույն դատական խորհրդի՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի վերաբերյալ որոշումը բողոքարկելու համար, ապա սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահից դատավորը կամ վարույթ հարուցող մարմինը կարող է բողոքարկել այդ որոշումը, եթե չի լրացել բողոքարկման համար սահմանված մեկամսյա ժամկետը:

14. Սույն օրենքի՝ կարգապահական պատասխանատվության հիմքերի և վարույթի վերաբերյալ դրույթները տարածվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո հարուցված կարգապահական վարույթների նկատմամբ:

15. Մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի դատավոր անդամներին, ինչպես նաև Վճռաբեկ դատարանի նախագահին մակագրված գործերի վերաբաշխում տեղի չի ունենում, իսկ սույն օրենքով սահմանված նվազեցումները տարածվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո մակագրված գործերի վրա:

16. Սույն օրենքի 26-րդ հոդվածով նախատեսված 105.1-րդ հոդվածի 5-րդ մասի սահմանափակումը չի տարածվում մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը դատավորի թեկնածուների հավակնորդների ցուցակում ընդգրկվելու համար անցկացված գրավոր քննության արդյունքների դատական կարգով բողոքարկման հետ կապված հարաբերությունների վրա:

17. Սույն օրենքով լրացվող 21-րդ հոդվածի 2.1-րդ մասը ուժի մեջ է մտնում 2021 թվականի հունվարի 1-ից: Մինչև տվյալ նորմի ուժի մեջ մտնելը Բարձրագույն դատական խորհուրդը սահմանում է օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու մասին միջնորդությունների քննության վերաբերյալ գործերի բաշխման կարգը:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՕՐԵՆՔԸ**

**«ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 1**. «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» 2017 թվականի հունիսի 9-ի ՀՕ-96-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 9-րդ հոդվածում՝

1) 4-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«4. Հանձնաժողովի անդամի պաշտոնում թեկնածուների ընտրության համար Ազգային ժողովի նախագահը ձևավորում է մրցութային խորհուրդ (այսուհետ՝ Խորհուրդ)՝ բացառությամբ Հանձնաժողովի առաջին կազմի անդամների նշանակման դեպքերի:».

2) 5-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«5. Խորհուրդը կազմված է Կառավարության, Ազգային ժողովի, Բարձրագույն դատական խորհրդի, Մարդու իրավունքների պաշտպանի և Փաստաբանների պալատի կողմից նշանակված մեկական անդամներից: Խորհրդի անդամ կարող է նշանակվել սույն օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին բավարարող անձը: Խորհրդի կազմում ընդգրկվելու համար Ազգային ժողովի նախագահը դիմում է Կառավարությանը, Ազգային ժողովին, Բարձրագույն դատական խորհրդին, Մարդու իրավունքների պաշտպանին և Փաստաբանների պալատին՝ յուրաքանչյուրի կողմից տասնօրյա ժամկետում մեկական թեկնածու առաջադրելու համար:».

3) 6-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«6.Եթե Կառավարությանը, Ազգային ժողովին, Բարձրագույն դատական խորհրդին, Մարդու իրավունքների պաշտպանին և Փաստաբանների պալատին վերապահված՝ Խորհրդի կազմում ներգրավվելու նպատակով սույն հոդվածի 5-րդ մասով սահմանված ժամկետում թեկնածու չի առաջադրվում, ապա նույն մարմինը թեկնածու առաջադրում է տասնօրյա ժամկետում:».

4) 7-րդ մասն ուժը կորցրած ճանաչել.

5) 8-րդ մասում «նույն մարմնի կողմից այդ պաշտոնում թեկնածու առաջադրելու իրավունքը պահպանվում է» բառերը փոխարինել «Ազգային ժողովի նախագահը սույն հոդվածով սահմանված կարգով՝ 10-օրյա ժամկետում դիմում է իրավասու մարմիններին՝ նոր մրցութային խորհուրդ ձևավորելու նպատակով:» բառերով.

6) լրացնել նոր՝ 9-րդ մաս.

«9. Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամի թեկնածուի ընտրության համար ձևավորվում է նոր Խորհուրդ, բացառությամբ այն դեպքերի, երբ մրցույթը կազմակերպվում է Հանձնաժողովի մեկից

ավելի թափուր պաշտոններ համալրելու նպատակով, որի պարագայում մրցույթն անցկացվում է միևնույն Խորհրդի կողմից:»:

**Հոդված 2.** Օրենքում լրացնել նոր՝ 10.1.-ին հոդված.

**«Հոդված 10.1. Խորհրդի գործառույթները և գործունեության կազմակերպումը**

1. Խորհուրդը՝

1) ապահովում է մրցույթի անցկացման պայմանների և ժամկետների վերաբերյալ տեղեկատվության հրապարակումը.

2) համադրում է թեկնածուի համապատասխանությունը սույն օրենքով նախատեսված պահանջներին (փաստաթղթերի գնահատման փուլ).

3) փաստաթղթերի գնահատման փուլի արդյունքում ընտրում է հարցազրույցի փուլ անցած թեկնածուների: Վերջիններիս ընտրելիս ուսումնասիրվում է նաև նրանց կողմից բարեվարքության պահպանումը.

4) հարցազրույցի փուլի ընթացքում բաց քվեարկության արդյունքում ընտրում է ներկայացվող պահանջներին առավելագույնս համապատասխանող 5 թեկնածու:

5) կազմում և Ազգային ժողովի նախագահին է ներկայացնում մրցույթում հաղթող ճանաչվածների ցուցակը՝ դրանում ներառելով Հանձնաժողովի անդամների թափուր պաշտոնների քանակին հավասար թվով հաղթողներ՝ յուրաքանչյուր թափուր պաշտոնի համար մեկ թեկնածու սկզբունքով.

6) մրցույթի կազմակերպմանն ու անցկացմանը վերաբերող հարցերի կապակցությամբ ընդունում է որոշումներ, այդ թվում՝ ներկայացված փաստաթղթերի կամ տեղեկությունների հավաստիությունը պարզելու, ինչպես նաև հավելյալ տեղեկություններ ստանալու վերաբերյալ:

2. Խորհրդի նիստն իրավազոր է Խորհրդի անդամների ընդհանուր թվի մեծամասնությանմասնակցության դեպքում: Նիստը վարում է Խորհրդի՝ նիստին մասնակցող տարիքով ավագ անդամը:

3. Խորհրդի որոշումներն ընդունվում են բաց քվեարկությամբ՝ Խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ: Խորհուրդն իր նիստերը հրավիրում է Ազգային ժողովի նստավայրում:

4. Խորհրդի նիստերն արձանագրվում են:».

**Հոդված 3.** Օրենքում լրացնել նոր՝ 10.2.-րդ հոդված.

«**Հոդված 10.2. Մրցույթի անցկացումը**

1. Ազգային ժողովի նախագահն Ազգային ժողովի աշխատակազմի միջոցով (սույն հոդվածում այսուհետ՝ աշխատակազմ) մրցույթը հայտարարում է Հանձնաժողովի անդամի լիազորությունների ավարտից ոչ շուտ, քան 90, և ոչ ուշ, քան 50 օր առաջ, իսկ նրա պաշտոնը թափուր մնալու դեպքում՝ 30 օրվա ընթացքում:

2. Հայտարարությունը հրապարակվում է առնվազն երեք հազար տպաքանակ ունեցող մամուլում կամ զանգվածային լրատվության այլ միջոցներով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների, Ազգային ժողովի պաշտոնական ինտերնետային կայքերում (այսուհետ՝ պաշտոնական կայքեր):

3. Հայտարարությունը պետք է պարունակի առնվազն հետևյալ տվյալները.

1) թեկնածուներին ներկայացվող պահանջները.

2) մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը.

3) մրցույթի անցկացման պայմանները, թեկնածուներին ներկայացվող պահանջների գնահատման առավելագույն միավորը, առավելագույն միավորի բաշխումը՝ ըստ գնահատման ենթակա առանձին պահանջների, գնահատման ենթակա պահանջների բովանդակությունը բացահայտող չափանիշները, չափանիշներից յուրաքանչյուրի գնահատման առավելագույն միավորը՝ համապատասխան պահանջի համար նախատեսված առավելագույն միավորի շրջանակներում, գնահատման և միավորների հաշվարկման կարգը.

4) փաստաթղթերը ներկայացնելու ժամկետը և վայրը:

4. Մրցույթին մասնակցելու հավակնություն ունեցող անձը (այսուհետ՝ հավակնորդ) հայտարարության հրապարակմանը հաջորդող 20 օրվա ընթացքում աշխատակազմ է ներկայացնում մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ փաստաթղթերը (այսուհետ՝ փաստաթղթեր), ինչպես նաև իր բնակության և էլեկտրոնային փոստի հասցեները:

5. Փաստաթղթերը կարող են հանձնվել առձեռն կամ ուղարկվել փոստով:

6. Փաստաթղթերն ընդունելու նպատակով աշխատակազմում վարվում է համապատասխան գրանցամատյան:

7. Փոստով ուղարկված փաստաթղթերը համարվում են սահմանված ժամկետում ներկայացված, եթե աշխատակազմը դրանք ստացել է մինչև սույն հոդվածի 4-րդ մասում նշված ժամկետը լրանալը:

8. Փոստով ուղարկված փաստաթղթերի ստացման վերաբերյալ հավակնորդը ծանուցվում է փաստաթղթերն ստանալուն հաջորդող մեկ օրվա ընթացքում՝ իր ներկայացրած էլեկտրոնային փոստի հասցեով:

9. Փաստաթղթերի թերությունները հավակնորդը կարող է վերացնել փաստաթղթերը ներկայացնելու համար սույն հոդվածի 4-րդ մասում նշված ժամկետը լրանալուն հաջորդող երեք օրվա ընթացքում:

10. Մրցույթն անցկացվում է երկու փուլով, որոնցից առաջինը փաստաթղթերի ամբողջականության և համապատասխանության ստուգման (այսուհետ՝ փաստաթղթային ստուգման) փուլն է, երկրորդը՝ հարցազրույցի:

11. Մրցույթի փաստաթղթային ստուգման փուլում Խորհուրդը ստուգում է փաստաթղթերի ամբողջականությունը, դրանց համապատասխանությունն անհրաժեշտ փաստաթղթերի ցանկին, իսկ ողջամիտ կասկածի դեպքում՝ նաև փաստաթղթերի կամ տեղեկությունների հավաստիությունը: Հավակնորդի ներկայացրած փաստաթղթերի կամ տեղեկությունների հավաստիությունը Խորհրդի որոշման հիման վրա պարզվում է աշխատակազմի միջոցով: Խորհրդի որոշման հիման վրա աշխատակազմի միջոցով ստացվում են նաև թեկնածուներին ներկայացվող պահանջների գնահատմանը վերաբերող հավելյալ տեղեկություններ: Խորհրդի տեղեկացմամբ հավակնորդը կարող է մասնակցել փաստաթղթային ստուգման փուլին:

12. Փաստաթղթերի թերի լինելու կամ անհրաժեշտ փաստաթղթերի ցանկին չհամապատասխանելու դեպքում հավակնորդին այդ մասին ծանուցում է աշխատակազմը մեկ օրվա ընթացքում՝ իր ներկայացրած էլեկտրոնային փոստի հասցեով:

13. Սույն հոդվածի 11-րդ մասում նշված գործողությունների արդյունքներով՝ Խորհուրդը կազմում է հարցազրույցի փուլ անցած անձանց ցուցակը: Խորհուրդը հարցազրույցի մասնակիցների ցուցակը, ինչպես նաև հարցազրույցի անցկացման օրը, ժամը և վայրը հրապարակում է Ազգային ժողովի պաշտոնական ինտերնետային կայքում:»:

**Հոդված 4.** Օրենքում լրացնել նոր՝ 10.3.-րդ հոդված.

«**Հոդված 10.3. Մրցույթում հաղթող ճանաչվածների ցուցակը Ազգային ժողովի նախագահին ներկայացնելը**

1. Խորհուրդը ցուցակը ներկայացնում է Ազգային ժողովի նախագահին ցուցակի հրապարակմանը հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում:

2. Ցուցակին կից ներկայացվում են Խորհրդի նիստերի արձանագրությունները, մրցույթի ընթացքում ներկայացված և ձեռք բերված փաստաթղթերը:»:

**Հոդված 5.** Օրենքում լրացնել նոր՝ 10.4.-րդ հոդված.

«**Հոդված 10.4. Նոր մրցույթի անցկացումը**

1. Նոր մրցույթ հայտարարվում է, եթե՝

1) Ազգային ժողովը չի նշանակում թեկնածուին.

2) հավակնորդների, թեկնածուների թիվը պակաս է թափուր տեղերի քանակից.

3) ի հայտ են եկել սույն օրենքի 18-րդ հոդվածի 2-րդ մասի 1.3-5-րդ կետերով նախատեսված հանգամանքներ, թեկնածուի մոտ Կառավարության սահմանած ցանկով նախատեսված՝ դատավորի նշանակմանը խոչընդոտող հիվանդություն կամ առկա են թեկնածուների ընտրությունն իրականացնելու անհնարինության այլ դեպքեր:

2. Խորհուրդը նոր մրցույթ անցկացնելու մասին հայտարարությունը հրապարակում է սույն հոդվածի 1-ին մասում նշված հիմքի մասին տեղեկանալու օրվան հաջորդող 20 օրվա ընթացքում:

3. Նոր մրցույթն անցկացվում է ընդհանուր կարգով:»:

**Հոդված 6.** Օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«5.Ազգային ժողովին հրաժարական ներկայացնելիս Հանձնաժողովի անդամն անհապաղ տեղեկացնում է Հանձնաժողովի նախագահին: Սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված այլ դեպքերում Հանձնաժողովի անդամի լիազորությունները դադարելուց, ինչպես նաև Հանձնաժողովի անդամի լիազորությունները դադարեցվելուց հետո՝ եռօրյա ժամկետում, Հանձնաժողովի նախագահը կամ սույն օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով նրան փոխարինող Հանձնաժողովի անդամն այդ մասին տեղեկացնում է Ազգային ժողովի նախագահին:»:

**Հոդված 7.** Օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝

«7) օրենքով սահմանված դեպքերում ու կարգով Բարձրագույն դատական խորհրդի անդամների, Սահմանադրական դատարանի դատավորների թեկնածուների, դատավորների, դատախազների, քննիչների թեկնածուների հավակնորդների բարեվարքության վերաբերյալ խորհրդատվական բնույթի եզրակացություններ ներկայացնելը, որոնք ենթակա չեն հրապարակման:»:

**Հոդված 8.** Օրենքի 24-րդ հոդվածում՝

1) 1-ին մասում՝

ա. լրացնել նոր՝ 2.1.-րդ կետ.

«2.1.) «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքով սահմանված դեպքերում կարգապահական վարույթ է հարուցում դատավորի և Բարձրագույն դատական խորհրդի անդամի նկատմամբ, ինչպես նաև դիմում է Ազգային Ժողովի

խմբակցություններին՝ «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 109-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված կարգով Սահմանադրական դատարանի դատավորի լիազորությունները էական կարգապահական խախտման հիմքով դադարեցնելու համար Սահմանադրական դատարան դիմելու հարցի քննարկման առաջարկությամբ:».

բ. 20-րդ կետից հանել «, կոռուպցիոն գործարքներում ներգրավվածության վերաբերյալ» բառերը.

գ. 21-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝

«21) օրենքով սահմանված դեպքերում ու կարգով Բարձրագույն դատական խորհրդի անդամների, Սահմանադրական դատարանի դատավորների թեկնածուների, դատավորների, դատախազների, քննիչների թեկնածուների հավակնորդների բարեվարքության վերաբերյալ իրականացնում է ուսումնասիրություններ և դրանց արդյունքներով ներկայացնում խորհրդատվական բնույթի եզրակացություններ.».

դ. «19) ընդունում է պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորի, դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի), 15 000 և ավելի բնակչություն ունեցող համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնները (կանոնագիրքը).

20) ընդունում է հանրային ծառայողի վարքագծի տիպային կանոնագիրքը.

21) մշակում է հանրային ծառայողների վարքագծի ոլորտային կանոնագրքերի նախագծերի մշակման և կիրարկման վերաբերյալ ուղեցույցը.

22) ամփոփում է անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, վարքագծի սկզբունքների և դրանցից բխող վարքագծի կանոնների, ինչպես նաև իրավիճակային շահերի բախման վերաբերյալ դրույթների իրացման պրակտիկան, ներկայացնում դրա միասնականության ապահովմանն ուղղված առաջարկություններ:» բառերը փոխարինել «22) ընդունում է պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորի, դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի), 15 000 և ավելի բնակչություն ունեցող համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնները (կանոնագիրքը).

23) ընդունում է հանրային ծառայողի վարքագծի տիպային կանոնագիրքը.

24) մշակում է հանրային ծառայողների վարքագծի ոլորտային կանոնագրքերի նախագծերի մշակման և կիրարկման վերաբերյալ ուղեցույցը.

25) ամփոփում է անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, վարքագծի սկզբունքների և դրանցից բխող վարքագծի կանոնների, ինչպես նաև իրավիճակային շահերի բախման վերաբերյալ դրույթների իրացման պրակտիկան, ներկայացնում դրա միասնականության ապահովմանն ուղղված առաջարկություններ:» բառերով.

2) 1.1.-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ՝

«1.1. Սույն հոդվածի 1-ին մասի 20-րդ և 21-րդ կետերով նախատեսված ուսումնասիրություններ իրականացնելու, դրանց արդյունքներով եզրակացություններ ներկայացնելու կարգը, ինչպես նաև բարեվարքության վերաբերյալ հարցաթերթիկի ձևը սահմանում է Հանձնաժողովը::

**Հոդված 9.** Օրենքի 25-րդ հոդվածում՝

1) 1-ին մասում լրացնել նոր՝ 5.-րդ կետ.

«5) հայտարարագրերի վերլուծության համար նշանակություն ունեցող հանգամանքներ պարունակող լրատվամիջոցների հրապարակումների կամ անձանց գրավոր դիմումների հիման վրա հայտարարագրերի վերլուծություն:».

2) 2-րդ մասը շարադրել նոր խմագրությամբ.

«2. Հայտարարագրերի վերլուծության ընթացքում Հանձնաժողովն իրավասու է պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից, այլ անձանցից պահանջելու և ստանալու (այդ թվում՝ էլեկտրոնային հարցման եղանակով) հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձանց առնչվող տեղեկություններ, փաստաթղթեր, այդ թվում՝ բանկային գաղտնիք կազմող տեղեկություններ, «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից արժեթղթերի հետ կատարված գործարքների վերաբերյալ ծառայողական տեղեկություններ, ապահովագրական գաղտնիք կազմող տեղեկություններ, ինչպես նաև վարկային բյուրոյից վարկային տեղեկատվություն կամ վարկային պատմություն:».

3) լրացնել նոր՝ 2.1.-ին մաս.

«2.1. Հայտարարագրերի վերլուծության ընթացքում Հանձնաժողովն իրավասու է բանկերին ուղղված հարցման միջոցով պահանջել և ստանալ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձանց հաշիվների առկայության, հաշվի մնացորդի և հաշվի շարժի վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն, ինչպես նաև բանկային պահատուփերում պահվող գույքի վերաբերյալ տեղեկություններ՝ հարցման մեջ նշելով անձի տվյալները, վերաբերելի ժամանակահատվածը կամ ամսաթիվը: Բանկային գաղտնիք կազմող տեղեկությունների փոխանցման կարգը սահմանվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի և հանձնաժողովի համատեղ իրավական ակտով: Հանձնաժողովն իրավասու է նաև հայտարարագիր ներկայացնելու պարտականություն

ունեցող անձանց վերաբերյալ բանկային գաղտնիք կազմող տեղեկություններ ստանալ օտարերկրյա բանկերից, ինչպես նաև օտարերկրյա բանկերի՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող մասնաճյուղերից և ներկայացուցչություններից: Բանկային գաղտնիք կազմող տեղեկություններ ստանալուց հետո Հանձնաժողովն իրավասու է պահանջել ներկայացնել լրացուցիչ նյութեր, իսկ սույն հոդվածի 9-րդ մասով նախատեսված հիմքերի առկայության դեպքում նյութերն ուղարկել գլխավոր դատախազություն:».

4) 3-րդ մասում «հայտարարատու պաշտոնատար անձի և նրա ընտանիքի կազմի մեջ մտնող անձի» բառերը փոխարինել «հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձի» բառերով.

5) 7-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.
«7. Եթե հայտարարագրերի վերլուծության արդյունքում մնում են կասկածներ, որ հայտարարատու պաշտոնատար անձի կամ իր ընտանիքի կազմի մեջ մտնող անձի գույքի էական փոփոխությունը (գույքի ավելացումը և (կամ) պարտավորությունների նվազումը) ողջամտորեն չի հիմնավորվում օրինական եկամուտներով, կամ վերջիններիս մոտ առկա է չհայտարարագրված կամ ոչ ամբողջական հայտարարագրված գույք, կամ եկամտի աղբյուրն օրինական կամ արժանահավատ չէ, ապա Հանձնաժողովն իրավասու է՝

ա) հայտարարատուից հայցելու պարզաբանում կամ լրացուցիչ նյութեր՝ դրանք ներկայացնելու համար տրամադրելով նվազագույնը 10, իսկ առավելագույնը՝ 30 օր ժամկետ.

բ) հայտարարագրված կամ հայտարարագրման ենթակա գործարքի կողմ հանդիսացող յուրաքանչյուր անձից կամ այն անձից, ում սեփականության իրավունքով կարող է պատկանել հայտարարատուի կողմից փաստացի տիրապետվող, օգտագործվող կամ տնօրինվող անշարժ գույքը, տրանսպորտային միջոցը կամ «Հանրային ծառայության մասին» օրենքի իմաստով թանկարժեք գույքը, պահանջել ներկայացնել գույքի եւ եկամուտների իրավիճակային հայտարարագիր, եթե վերը նշված կասկածները կարող են փարատվել իրավիճակային հայտարարագրով ներկայացման ենթակա տվյալների վերլուծությամբ: Սույն կետով նախատեսված դեպքում Հանձնաժողովը կայացնում է որոշում՝ նշելով այն հանգամանքները, որոնք կարող են պարզվել իրավիճակային հայտարարագրի ներկայացմամբ:»:

6) լրացնել նոր՝ 9.1.-ին մաս.
«9.1. Եթե սույն հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարատուն դատավոր կամ Բարձրագույն դատական խորհրդի անդամ է, ապա Հանձնաժողովը նյութերը գլխավոր դատախազություն ուղարկելուն զուգահեռ հարուցում է կարգապահական վարույթ: Վարույթի ընթացքում ձեռք բերված նյութերը դատավորին կամ Բարձրագույն դատական խորհրդի անդամին կարգապահական

պատասխանատվության ենթարկելու միջնորդության հետ միասին ներկայացվում են Բարձրագույն դատական խորհուրդ:».

7) լրացնել նոր՝ 9.2.-րդ մաս.

«9.2. Եթե սույն հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարատուն Սահմանադրական դատարանի դատավոր է, ապա Հանձնաժողովը նյութերը գլխավոր դատախազություն ուղարկելուն զուգահեռ դրանք ուղարկում է Ազգային Ժողովի խմբակցություններին՝ «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 109-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված կարգով Սահմանադրական դատարանի դատավորի լիազորությունները էական կարգապահական խախտման հիմքով դադարեցնելու համար Սահմանադրական դատարան դիմելու հարցի քննարկման առաջարկությամբ:»:

**Հոդված 10.**Օրենքը լրացնել նոր՝ 26.1.-րդ հոդվածով.

**«Հոդված 26.1. Բարեվարքության վերաբերյալ ուսումնասիրությունը**

1. Հանձնաժողովը օրենքով սահմանված ժամկետում իրականացնում է սույն օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 21-22-րդ կետերով նախատեսված անձանց բարեվարքության վերաբերյալ ուսումնասիրություն:

2. Սույն օրենքի իմաստով բարեվարքության ուսումնասիրությունը ներառում է.

1) բարեվարքության վերաբերյալ հարցաթերթիկում ներկայացված տվյալների արժանահավատության ստուգում.

2) անձի կողմից նախկինում քրեական, վարչական կամ կարգապահական պատասխանատվության ենթարկված լինելու հանգամանքի, այդ թվում՝ կոռուպցիոն գործարքներում ներգրավվածության, վերջիններիս կողմից վարքագծի կանոնների պահպանման, շահերի բախման, անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների խախտում կատարած լինելու հանգամանքների ուսումնասիրություն.

3) անձի վերաբերյալ զանգվածային լրատվական միջոցներում, ինչպես նաև սոցիալական ցանցերում հրապարակված տեղեկությունների ուսումնասիրություն.

4) անձի գույքային դրության՝ փաստացի ստացած եկամուտներին համապատասխանության, ինչպես նաև նախկինում ներկայացված հայտարարագրերի ուսումնասիրություն.

5) անձանց աշխատանքային գործունեության վերաբերյալ տեղեկությունների ուսումնասիրություն.

6) անձանց քրեական ենթամշակույթին հարելու հնարավորության ուսումնասիրություն:

3. Հանձնաժողովը բարեվարքության ուսումնասիրության գործընթացում իրավասու է պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնից, պետական կազմակերպություններից կամ դրանց

պաշտոնատար անձանցից, այլ անձանցից պահանջելու և ստանալու Հանձնաժողովում քննարկվող հարցին առնչվող ցանկացած նյութ, փաստաթուղթ կամ տեղեկություն:

4. Բարեվարքության, այդ թվում՝ կոռուպցիոն գործարքներում ներգրավվածության վերաբերյալ ուսումնասիրությանը Հանձնաժողովի որոշմամբ կարող են ներգրավվել նաև միջազգային փորձագետներ:

5. Հանձնաժողովը տեղեկատվության ամփոփման և ուսումնասիրության արդյունքում կազմում և իրավասու մարմին է ներկայացնում անձի բարեվարքության վերաբերյալ եզրակացություն:

**Հոդված 11.** Օրենքի 28-րդ հոդվածը 1-ին մասը շարադրել նոր խմբագրությամբ՝

«1. Հանձնաժողովը քննության է առնում դիմումը, եթե այն ներկայացվել է խախտման կատարման կամ դեպքի պահից մեկ տարվա ընթացքում:»:

**Հոդված 12.** Օրենքի 31-րդ հոդվածի 4-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«4. Վարույթի շրջանակում Հանձնաժողովն իրավասու է պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնից, պետական կազմակերպություններից կամ դրանց պաշտոնատար անձանցից, այլ անձանցից պահանջելու և ստանալու Հանձնաժողովում քննարկվող հարցին առնչվող ցանկացած նյութ, փաստաթուղթ կամ տեղեկություն, ինչպես նաև իր կողմից բացահայտման ենթակա հանգամանքների վերաբերյալ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնից, պետական կամ համայնքային հիմնարկից, պետական կազմակերպությունից կամ դրանց պաշտոնատար անձանցից պահանջելու անցկացնել անվճար ուսումնասիրություններ, կատարելու անվճար փորձաքննություններ և ներկայացնելու դրանց արդյունքները:»:

**Հոդված 13.** Օրենքի 42-րդ հոդվածում՝

1) 2.1.-ին մասը շարադրել նոր խմբագրությամբ՝

«2.1. Սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ և 7-րդ կետերը, ինչպես նաև 24-րդ հոդվածի 1-ին մասի 2.1.-ին, 20-րդ, 21-րդ կետերը «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով պետական պաշտոններում նշանակման ենթակա անձանց, դատախազների և քննիչների թեկնածուների հավակնորդներիս մասով ուժի մեջ են մտնում համապատասխանաբար «Հանրային ծառայության մասին», «Դատախազության մասին», «Հատուկ քննչական ծառայության մասին» և «Քննչական կոմիտեի մասին» օրենքներում համապատասխան փոփոխություններն ուժի մեջ մտնելուց հետո:»:

2) Ուժը կորցրած ճանաչել 3-րդ և 4-րդ մասերը:

3) լրացնել նոր՝ 4.1.-ին մաս.

«4.1. Հայտարարագրերի վերլուծության վերաբերյալ սույն օրենքով սահմանված դրույթները կիրառելի են նաև 2017 թվականի հուլիսի 1-ից ներկայացված կամ ներկայացման ենթակա հայտարարագրերի նկատմամբ:»:

**Հոդված 13. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ**

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

2. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո եռամսյա ժամկետում Հանձնաժողովը վերլուծում է Բարձրագույն դատական խորհրդի հայտարարագրերը:

3. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո հնգամսյա ժամկետում Հանձնաժողովը վերլուծում է Սահմանադրական դատարանի անդամների հայտարարագրերը:

4. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո երկու տարվա ժամկետում Հանձնաժողովը վերլուծում է դատավորների հայտարարագրերը:

5. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում Հանձնաժողովը և Կենտրոնական բանկը համատեղ իրավական ակտով հաստատում են հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձանց վերաբերյալ բանկային գաղտնիք կազմող տեղեկությունների փոխանցման կարգը:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ՕՐԵՆՔԸ
## «ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1.** «Հանրային ծառայության մասին» 2018 թվականի մարտի 23-ի ՀՕ-206-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 29-րդ հոդվածում՝

1) վերնագրից հանել «Պաշտոնեական (ծառայողական) պարտականությունների իրականացման հետ կապված» բառերը.

2) 1-ին մասից հանել «եթե ողջամտորեն կարող է ընկալվել, որ այն կապված է պաշտոնեական (ծառայողական) պարտականությունների իրականացման հետ» բառերը.

3) 2-րդ մասում «հոդվածի» բառը փոխարինել «օրենքի» բառով.

4) 3-րդ մասից հանել «պաշտոնեական (ծառայողական) պարտականությունների իրականացման հետ կապված» բառերը.

5) 4-րդ մասում «75 000» թիվը փոխարինել «40 000» թվով:

**Հոդված 2.** Օրենքի 30-րդ հոդվածի վերնագրից հանել «**Պաշտոնեական (ծառայողական) պարտականությունների իրականացման հետ կապված» բառերը:**

**Հոդված 3.** Օրենքի 34-րդ հոդվածում՝

1) լրացնել նոր՝ 5.1.-ին, 5.2.-րդ և 5.3.-րդ մասեր.

«5.1. «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքով սահմանված դեպքերում անձինք մեկամսյա ժամկետում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով են ներկայացնում գույքի և եկամուտների իրավիճակային հայտարարագիր: Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի պահանջով իրավիճակային հայտարարագիր չներկայացրած անձը համարվում է հայտարարագիր չներկայացրած կամ ժամկետի խախտմամբ ներկայացրած.

5.2. Իրավիճակային հայտարարագրի նկատմամբ տարածվում են հայտարարատու պաշտոնատար անձի՝ պաշտոնի ստանձնման հայտարարագրի բովանդակության և ներկայացման կարգի համար սույն օրենքով նախատեսված ընդհանուր կանոնները.

5.3. Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի՝ իրավիճակային հայտարարագիր ներկայացնելու վերաբերյալ որոշումը կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կանոններով:».

2) 8-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«8. Հայտարարատու պաշտոնատար անձի ընտանիքի չափահաս անդամները համարվում են հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձ և հայտարարատու պաշտոնատար անձի հայտարարագրում լրացնում են իրենց գույքի և եկամուտների վերաբերյալ տվյալները, պատասխանատու են դրանց իսկության համար: ».

2) 9-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«9. Հայտարարատու պաշտոնատար անձի ընտանիքի անդամներն (ընտանիքի կազմի մեջ մտնող անձինք) են նրա ամուսինը, զավակը (այդ թվում՝ որդեգրված), հայտարարատու պաշտոնատար անձի խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձը, հայտարարատու պաշտոնատար անձի Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ ծնողը, քույրը և եղբայրը, հայտարարատու պաշտոնատար անձի հետ համատեղ բնակվող յուրաքանչյուր չափահաս անձ:».

3) 10-րդ մասում լրացնել նոր նախադասություն. «Սույն օրենքի իմաստով՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ է համարվում այն անձը, ով մեկ տարվա ընթացքում 183 և ավելի օր փաստացի գտնվել է Հայաստանի Հանրապետությունում:».

4) 11-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«11. Հայտարարատու պաշտոնատար անձի, նրա ընտանիքի անդամի, ինչպես նաև սույն հոդվածի 5.1.-րդ կետով սահմանված դեպքերում հայտարարագրերը սույն օրենքի և Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից սահմանված պահանջների, կարգի և ժամկետների պահպանմամբ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով չներկայացնելն առաջացնում է օրենքով նախատեսված պատասխանատվություն:».

5) 12-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«12. Հայտարարագրի ներկայացման փաստի ուժով հայտարարագիր ներկայացրած անձը հաստատում է, որ ծանոթ է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի իրավասությանը՝ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնից, պետական կազմակերպություններից կամ դրանց պաշտոնատար անձանցից, այլ անձանցից ստանալու իրեն առնչվող տեղեկություններ, փաստաթղթեր, այդ թվում՝ բանկային գաղտնիք կազմող տեղեկություններ, «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից արժեթղթերի հետ կատարված գործարքների վերաբերյալ ծառայողական տեղեկություններ, ապահովագրական գաղտնիք կազմող տեղեկություններ, ինչպես նաև վարկային բյուրոյից վարկային տեղեկատվություն կամ վարկային պատմություն:»:

**Հոդված 4.** Օրենքի 40-րդ հոդվածի 3-րդ մասի 6-րդ կետում «միջոցի չափը,» բառերից հետո լրացնել «ծագման աղբյուրը, », իսկ 7-րդ մասում՝ «, ծագման աղբյուրը» բառերը:

**Հոդված 5.** Օրենքի 41-րդ հոդվածի 9-րդ մասում «երկու» բառը փոխարինել «մեկ» բառով:

**Հոդված 6.** Սույն օրենքը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԸ**

**«ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՄԱՍԻՆ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»**

**Հոդված 1.** «Սահմանադրական դատարանի մասին» 2018 թվականի հունվարի 17-ի ՀՕ-42-Ն սահմանադրական օրենքի 9-րդ հոդվածում՝

1) 6-րդ մասում «գլխավոր դատախազը» բառերից հետո լրացնել «կամ նրա տեղակալը» բառերը.

2) 10-րդ մասում «մասնակցությամբ» բառից հետո լրացնել «առանց դատարանի թույլտվության իրականացվող» բառերը:

**Հոդված 2**. Օրենքի 12-րդ հոդվածում՝

1) 3-րդ մասի

ա) 3-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«3) սույն օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 1-4-րդ, 8-9-րդ, 11-12-րդ, 15-16-րդ, կետերով, ինչպես նաև նույն հոդվածի 2-րդ մասի 1-3-րդ, 5-10-րդ կետերով նախատեսված վարքագծի կանոնները դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ խախտելը, որը, պայմանավորված կատարման հանգամանքներով և (կամ) առաջացրած հետևանքներով, համատեղելի չէ դատավորի կարգավիճակի հետ.».

2) լրացնել նոր՝ 3.1-ին և 3.2-րդ մասեր.

«3.1. Սույն հոդվածի իմաստով՝ արարքը համարվում է կոպիտ անփութությամբ կատարված, եթե դատավորը չի գիտակցել իր վարքագծի ոչ իրավաչափ բնույթը, թեև տվյալ իրադրությունում ակնհայտորեն կարող էր և պարտավոր էր դա անել:

3.2. Սույն հոդվածի իմաստով՝ արարքը համարվում է դիտավորությամբ կատարված, եթե դատավորը գիտակցել է իր վարքագծի ոչ իրավաչափ բնույթը:»:

**Հոդված 3**. Օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«3. Սահմանադրական դատարանի դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու նպատակով վարույթը կարող է հարուցվել սույն օրենքով սահմանված վարքագծի կանոնները դատավորի կողմից խախտվելու հիմքով այն հայտնաբերելուց հետո՝ եռամսյա

ժամկետում, բայց ոչ ուշ, քան այդ հիմքը ծագելուց մեկ տարի հետո՝ բացառությամբ սույն օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ և 16-րդ կետերով նախատեսված խախտումների: Դատավորի կողմից սույն օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ և 16-րդ կետերով նախատեսված վարքագծի կանոնները խախտելու հիմքով կարգապահական վարույթ կարող է հարուցվել դրանք հայտնաբերելուց հետո՝ մեկ տարվա ժամկետում, բայց ոչ ուշ, քան այդ հիմքը ծագելուց երեք տարի հետո:»:

**Հոդված 4.** Օրենքի 14-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը շարադրել նոր խմբագրությամբ.

«1. Ցանկացած գործունեություն իրականացնելիս և բոլոր հանգամանքներում Սահմանադրական դատարանի դատավորը պարտավոր է՝

1) զերծ մնալ դատական իշխանությունը վարկաբեկող, ինչպես նաև դատական իշխանության անկախության և անաչառության վերաբերյալ հանրության վստահությունը նվազեցնող վարքագիծ դրսևորելուց.

2) չօգտագործել կամ թույլ չտալ այլ անձանց օգտագործելու իր՝ դատավորի պաշտոնի հեղինակությունը՝ ի շահ իրեն կամ այլ անձի.

3) դրսևորել քաղաքական զսպվածություն և չեզոքություն.

4) զերծ մնալ մեկ այլ դատավորի կողմից արդարադատության իրականացմանը միջամտելուց.

5) զերծ մնալ դատավորի մասնագիտական և անձնական որակները հրապարակայնորեն կասկածի տակ առնելուց.

6) զերծ մնալ դատարանի գործողությունները, դատական ակտերը հրապարակայնորեն կասկածի տակ առնելուց, բացառությամբ օրենքով նախատեսված կամ գիտական ազատության շրջանակում իրականացվող մասնագիտական գործունեության դեպքերի.

7) զերծ մնալ որևէ դատարանում քննվող կամ ակնկալվող գործի վերաբերյալ հրապարակայնորեն կարծիք հայտնելուց, բացառությամբ այն դեպքերի, երբ դատավորը գործով հանդես է գալիս որպես կողմ կամ կողմի օրինական ներկայացուցիչ.

8) զերծ մնալ այնպիսի հայտարարություն անելուց կամ վարքագիծ դրսևորելուց, որը վտանգում կամ կասկածի տակ է առնում դատավորի կամ դատարանի անկախությունը և անաչառությունը.

9) արդարադատություն և որպես դատարան՝ օրենքով նախատեսված այլ լիազորություններ, ինչպես նաև դատավորի կարգավիճակից բխող իրավունքներ իրականացնելու կապակցությամբ իր գործունեությանը միջամտելու վերաբերյալ անհապաղ հայտնել Սահմանադրական դատարանին.

10) հանդես չգալ որպես ներկայացուցիչ կամ չտրամադրել խորհրդատվություն, այդ թվում՝ անհատույց հիմունքներով, բացառությամբ այն դեպքերի, երբ նա հանդես է գալիս որպես օրինական

ներկայացուցիչ կամ անհատույց իրավաբանական խորհրդատվություն է մատուցում իր մերձավոր ազգականներին կամ իր խնամակալության կամ հոգաբարձության ներքո գտնվող անձանց.

11) ձեռնպահ մնալ որևէ մեկից նվեր կամ այլ գույքային առավելություն ընդունելուց կամ այն հետագայում ընդունելու համաձայնություն տալուց, եթե դա ողջամտորեն կարող է ընկալվել որպես դատավորի վրա ներգործելուն նպատակաուղղված, պահպանել դատավորի՝ նվեր ընդունելու սահմանափակումներին վերաբերող սույն օրենքով նախատեսված կանոնները.

12) չնախաձեռնել, թույլ չտալ և հաշվի չառնել առանց դատավարության հակառակ կողմի կամ նրա ներկայացուցչի մասնակցության (“ex parte” (էքս պարտե), այսուհետ՝ ընդդիմազերծ) դատավարության մյուս կողմի կամ նրա ներկայացուցչի հետ շփումները, իսկ դատավորի կամքից անկախ ընդդիմազերծ շփումներ տեղի ունենալու դեպքում առաջին իսկ հնարավորության պարագայում հայտնել դրանց բովանդակությունն այն կողմին, որը մասնակից չի եղել այդ շփումներին՝ հնարավորություն տալով արձագանքելու: Սույն կանոնից բացառությունները թույլատրելի են միայն հետևյալ դեպքերում.

ա. երբ հանգամանքների բերումով ընդդիմազերծ շփումներն անհրաժեշտ են կազմակերպական նպատակներով, ինչպես օրինակ՝ դատական նիստի ամսաթիվը և ժամը համաձայնեցնելու կամ դատավարության կազմակերպման այլ դեպքերում, և այն պայմանով, որ շփումները չեն վերաբերում գործի էությանը, դրանց արդյունքում դատավարության կողմերից մեկը չի ստանում դատավարական կամ այլ առավելություն մյուս կողմի նկատմամբ, և դատավորն առաջին իսկ հնարավորության պարագայում հայտնում է այդ շփումների բովանդակությունը մյուս կողմին՝ նրան հնարավորություն տալով արձագանքելու,

բ. երբ դատավորի կողմից միակողմանի շփումներ իրականացնելն ուղղակիորեն նախատեսված է օրենքով.

13) չնախաձեռնել և թույլ չտալ այն դատավորի հետ խորհրդակցելը, որի վերաբերյալ Սահմանադրական դատարանը կայացրել է գործի քննությանը մասնակցելու անհնարինության վերաբերյալ որոշում.

14) կիրառման ենթակա իրավունքի վերաբերյալ հարցերով խորհրդակցելու համար գործի ելքում չշահագրգռված մասնագետի դիմելիս (բացառությամբ այլ դատավորի, ինչպես նաև դատարանի աշխատակազմի այն աշխատակիցների, որոնց գործառույթը դատավորին արդարադատություն իրականացնելիս օժանդակելն է) կողմերին տեղեկացնել այդ մասնագետի ինքնության, ներկայացված հարցի վերաբերյալ ստացված կարծիքի մասին և հնարավորություն տալ նրանց այդ կապակցությամբ ներկայացնելու իրենց դիրքորոշումը.

15) ներկայացնել գույքի, եկամուտների և շահերի հայտարարագիր՝ «Հանրային ծառայության մասին» օրենքով նախատեսված պահանջների պահպանմամբ.

16) «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքով նախատեսված դեպքերում և կարգով Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին ներկայացնել պատշաճ նյութեր կամ պարզաբանումներ, որոնք հաստատում են, որ իր գույքի փոփոխությունը (գույքի ավելացումը և (կամ) պարտավորությունների նվազումը) ողջամտորեն հիմնավորվում է օրինական եկամուտներով, կամ իր մոտ առկա չէ չհայտարարագրված կամ ոչ ամբողջական հայտարարագրված գույք, կամ եկամտի աղբյուրը օրինական է և արժանահավատ է:»:

2. Արդարադատության և որպես դատարան՝ օրենքով նախատեսված այլ լիազորությունների իրականացման հետ կապված դատավորի պարականությունները գերակա են նրա կողմից իրականացվող այլ գործունեության նկատմամբ: Ի պաշտոնե գործելիս դատավորը պարտավոր է՝

1) քննել և լուծել իր իրավասությանը վերապահված հարցերը, բացառությամբ սույն օրենքի 16-րդ հոդվածով սահմանված դեպքերի.

2) որոշում կայացնելիս լինել ինքնուրույն.

3) լինել անաչառ և զերծ մնալ իր խոսքով կամ վարքագծով կողմնակալություն կամ խտրականություն դրսևորելուց կամ ողջամիտ, անկողմնակալ դիտորդի մոտ նման տպավորություն ստեղծելուց.

4) հարգալից և բարեկիրթ վերաբերմունք ցուցաբերել դատավարության մասնակիցների, դատավորների, դատարանի աշխատակազմի և բոլոր այն անձանց նկատմամբ, որոնց հետ դատավորը շփվում է ի պաշտոնե.

5) թույլ չտալ շահերի բախում, բացառել ընտանեկան, հասարակական կամ այլ բնույթի հարաբերությունների՝ իր ի պաշտոնե լիազորությունների իրականացման վրա որևէ ազդեցություն.

6) արդարադատության և որպես դատարան՝ օրենքով նախատեսված այլ լիազորությունների իրականացումից զատ, այլ նպատակներով չօգտագործել, չհրապարակել կամ այլ կերպ մատչելի չդարձնել պաշտոնեական պարտականությունների իրականացման կապակցությամբ իրեն հայտնի դարձած ոչ հրապարակային տեղեկությունը, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ.

7) դատական ծառայողների նշանակման գործընթացին մասնակցելիս խուսափել հովանավորչություն դրսևորելուց.

8) չմիջամտել դատական նիստերի ձայնագրման համակարգի աշխատանքին.

9) զերծ մնալ այնպիսի գործողություններ ձեռնարկելուց, որոնք նպատակ են հետապնդում ստեղծել գործի քննությանը մասնակցելու անհնարինության հիմքեր.

10) սույն օրենքի 16-րդ հոդվածով սահմանված հիմքերի առկայության դեպքում բացահայտել դրանք.

11) պահպանել «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի պահանջները.

12) դատական նիստերը վարել օրենքով սահմանված հանդերձանքով:»:

**Հոդված 5.** Օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասից հանել «, եթե ողջամտորեն կարող է ընկալվել, որ այն կապված է իր պաշտոնեական պարտականություններն իրականացնելու հետ» բառերը:

**Հոդված 6.** Օրենքի 82-րդ հոդվածում՝

1) 1-ին մասում «դատավոր» բառից հետո լրացնել «, բացառությամբ էական կարգապահական խախտման դեպքի, որի պարագայում դիմում կարող է ներկայացնել Ազգային Ժողովը՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով ընդունված որոշմամբ՝ սույն օրենքի 83-րդ հոդվածով սահմանված կարգով».

2) 11-րդ մասում «դատավորի անձը,» բառերից հետո լրացնել «դիտավորությունը կամ կոպիտ անփութությունը,» բառերը:

**Հոդված 7**. Օրենքում լրացնել նոր՝ 84.1.-րդ հոդված.

**«Հոդված 84.1. Սահմանադրական դատարանի դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի քննությունը՝ կախված քրեական վարույթից**

1. Սահմանադրական դատարանի դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի քննությունը կասեցվում է, եթե նույն փաստերի առթիվ հարուցվել է քրեական գործ և վերսկսվում է քրեական վարույթի ավարտից հետո:

2. Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի քննությունը Սահմանադրական դատարանի կողմից կարճվում է, եթե կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի քննությունը վերսկսելուց հետո առկա են սույն օրենքի 12-րդ հոդվածով նախատեսված՝ Սահմանադրական դատարանի դատավորի լիազորությունների դադարման հիմքեր: Քրեական գործով օրինական ուժի մեջ մտած դատական ակտը կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը քննելիս պարտադիր է Սահմանադրական դատարանի համար միայն այն փաստերով, որոնցով հաստատված են որոշակի գործողությունների կատարումը և դրանք կատարած անձինք:»:

**Հոդված 8. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ**

1. Սույն օրենքը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

2. Կարգապահական պատասխանատվության հիմքերի և վարույթի վերաբերյալ սույն օրենքի դրույթները տարածվում են սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո հարուցված վարույթների նկատմամբ:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԸ

## «ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»

**Հոդված 1.** «Ազգային ժողովի կանոնակարգ» 2016 թվականի դեկտեմբերի 16-ի ՀՕ-9-Ն սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Օրենք) 109-րդ հոդվածում լրացնել նոր՝4.1-ին մաս.

«4.1. Սահմանադրական դատարանի դատավորի լիազորությունները էական կարգապահական խախտում թույլ տալու հիմքերով դադարեցնելու դիմումը կարող է հիմնված լինել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից տրամադրած նյութերի վրա:»:

**Հոդված 2**. Օրենքի 153.1-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել նոր նախադասությամբ.

«Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամի լիազորություններն օրենքով սահմանված հիմքերի առկայության դեպքում դադարեցնելու մասին Ազգային ժողովի որոշման նախագիծը խմբակցությունը ներկայացնում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի առաջարկության հիման վրա:»:

**Հոդված 3.** Սույն օրենքը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

## «ԲԱՆԿԱՅԻՆ ԳԱՂՏՆԻՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»

**Հոդված 1.** «Բանկային գաղտնիքի մասին» 1996 թվականի հոկտեմբերի 7-ի ՀՕ-80 օրենքի 13.4-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ.

**«Հոդված 13.4. Բանկային գաղտնիքի տրամադրումը Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին**

1. «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» և «Հանրային ծառայության մասին» օրենքներով սահմանված դեպքերում և կարգով հայտարարագիր ներակայացնելու պարտականություն ունեցող անձանց վերաբերյալ վարկային և բանկային գաղտնիք կազմող տեղեկությունների տրամադրումը Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին բանկային գաղտնիքի հրապարակում չի համարվում:»:

**Հոդված 2.** Սույն օրենքը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ «ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»

**Հոդված 1.** «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» 2007 թվականի ապրիլի 9-ի ՀՕ-177-Ն օրենքում լրացնել (այսուհետ՝ Օրենք)նոր՝ 115.1-ին հոդված.

«**Հոդված 115.1 Ապահովագրական գաղտնիքի տրամադրումը Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին**

1. «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» և «Հանրային ծառայության մասին» օրենքներով սահմանված դեպքերում և կարգով հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձանց վերաբերյալ ապահովագրական գաղտնիք կազմող տեղեկությունների տրամադրումը Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին ապահովագրական գաղտնիքի հրապարակում չի համարվում:»:

**Հոդված 2**. Օրենքի 118-րդ հոդվածի 1-ին մասում «115» թիվը փոխարինել «115.1» թվով:

**Հոդված 3.** Սույն օրենքը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ «ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՇՈՒԿԱՅԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»

**Հոդված 1.** «Արժեթղթերի շուկայի մասին» 2007 թվականի հոկտեմբերի 11-ի ՀՕ-195-Ն օրենքի 98-րդ հոդվածի 2-րդ մասի 11-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«11) «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» և «Հանրային ծառայության մասին» օրենքներով սահմանված դեպքերում և կարգով հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձանց վերաբերյալ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին տեղեկությունների տրամադրումը:»:

**Հոդված 2.** Սույն օրենքը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ**
**«ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»**

**Հոդված 1.** «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» 1998 թվականի մայիսի 5-ի ՀՕ-221 օրենքի 2-րդ հոդվածում լրացնել նոր՝ 9-րդ կետ.
«9) Բարձրագույն դատական խորհրդի որոշումները՝ «Դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 151-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետի և 5-րդ մասով սահմանված դեպքերում:»:

**Հոդված 2.** Սույն օրենքը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ**
**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»**

**Հոդված 1.** Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 284-րդ հոդվածի 2-րդ մասում «այդպիսի միջոցառումների իրականացման կամ դրանց իրականացման համար միջնորդող մարմնի գտնվելու վայրի» բառերը փոխարինել «Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության» բառերով:»:

**Հոդված 2.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2021 թվականի հունվարի 1-ից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՕՐԵՆՔԸ**
**ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**
**ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 1.** Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության 1985 թվականի դեկտեմբերի 6-ի օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 37-րդ հոդվածի 7-րդ մասից հանել «հայտնաբերվելուց հետո՝ երկու ամսվա ընթացքում, սակայն ոչ ուշ, քան իրավախախտումը» բառերը:

**Հոդված 2.** Օրենսգրքի 169.28 հոդվածում՝

1) 1-ին մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«1.«Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված՝ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձի կողմից (սույն հոդվածում այսուհետ՝ հայտարարատուներ) «Հանրային ծառայության մասին» օրենքով նախատեսված հայտարարագրերը (սույն հոդվածում այսուհետ՝ հայտարարագրեր) «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված ժամկետները լրանալուց հետո 30 օրվա ընթացքում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի գրավոր ծանուցման հիման վրա չներկայացնելը՝

«առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով:»

2) 2-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:

**Հոդված 3**. Օրենսգրքում լրացնել նոր՝ 206.17 հոդված.

«**Հոդված 206.17. Դատավորի նկատմամբ կարգապահական վարույթի վերաբերյալ տեղեկություններ հրապարակելը**

1. Դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու հաղորդում ներկայացրած անձի կողմից վարույթի վերաբերյալ տեղեկություններ հրապարակելը՝ մինչև կարգապահական վարույթ հարուցած մարմնի կողմից դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու միջնորդությամբ Բարձրագույն դատական խորհուրդ դիմելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով:

2. Սույն հոդվածի 1-ի մասով նախատեսված արարքը, որը կատարվել է Էթիկայի և կարգապահական հանձնաժողովի ոչ դատավոր անդամի կողմից՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի չորսհարյուրապատիկի չափով:»:

**Հոդված 4.** Օրենսգրքի 223-րդ հոդվածում լրացնել նոր՝ 5.1.-ին մաս. «սույն օրենսգրքի 206.17-րդ հոդվածով նախատեսված դեպքում՝ Բարձրագույն դատական խորհրդի աշխատակազմի ղեկավարի (Դատական դեպարտամենտի ղեկավար) հայցադիմումով.»:

**Հոդված 5**. Օրենսգրքի 244.17-րդ հոդվածի վերնագրում և տեքստում «Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի» բառերը փոխարինել «Կոռուպցիայի կանխարգելման» բառերով:

**Հոդված 6.** Սույն օրենքը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՕՐԵՆՔԸ**

**«ՀԵՏԱԽՈՒԶԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ»**

**ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 1.** «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» 2007 թվականի հոկտեմբերի 22-ի ՀՕ-223-Ն օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետում «ազգային անվտանգության մարմիններում» բառերից առաջ լրացնել «Սահմանադրական դատարանի դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատավորի, դատախազի, քննիչի պաշտոնում,» բառերը:

**Հոդված 2.** Սույն օրենքը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՕՐԵՆՔԸ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 1.** Հայաստանի Հանրապետության 2003 թվականի ապրիլի 18-ի քրեական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 314.2-րդ հոդվածում՝

1) վերնագրում «Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի» բառերը փոխարինել «Կոռուպցիայի կանխարգելման» բառերով.

2) 1-ին մասում «Հայտարարատու պաշտոնատար անձի, ինչպես նաև նրա ընտանիքի կազմի մեջ մտնող անձի կողմից «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված» բառերը փոխարինել ««Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձի կողմից» բառերով.

3) «2-րդ» բառը փոխարինել «1-ին» բառով:

**Հոդված 2.** Օրենսգրքի 314.3-րդ հոդվածի 1-ին մասում «Հայտարարատու պաշտոնատար անձի, ինչպես նաև նրա ընտանիքի կազմի մեջ մտնող անձի կողմից «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված» բառերը փոխարինել ««Հանրային

ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձի կողմից» բառերով:

**Հոդված 3.** Օրենսգիրքը լրացնել՝ Հավելված N 6-ով.

**«Հավելված N 6**
**Հայաստանի Հանրապետության**
**քրեական օրենսգրքի**

**ՑԱՆԿ**
**ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ**

Հոդված 154.2. Ընտրողներին կաշառք տալը, կաշառք ստանալը, ընտրությունների ժամանակ բարեգործության արգելքի խախտումը կամ ընտրողի ազատ կամքի իրականացմանը խոչընդոտելը.
Հոդված 154.9. Ընտրակաշառքի միջնորդությունը.
Հոդված 178. 2-րդ մաս, կետ 1.1) Խարդախություն՝ պաշտոնեական դիրքն օգտագործելով. 3-րդ մաս, եթե կատարվել է պաշտոնեական դիրքն օգտագործելով.
Հոդված 179. 2-րդ մաս կետ 1) Յուրացնելը կամ վատնելը՝ պատշոնեական դիրքն օգտագործելով. 3-րդ մաս, եթե կատարվել է պաշտոնեական դիրքն օգտագործելով.
Հոդված 189.1. 2-րդ մաս կետ 3) Ֆինանսական բուրգ ստեղծելը, կազմակերպելը կամ ղեկավարելը՝ պաշտոնեական դիրքն օգտագործելով.
Հոդված 190. Հանցավոր ճանապարհով ստացված գույքն օրինականացնելը (փողերի լվացում).
Հոդված 190.1. 3-րդ մաս կետ 3) ներքին տեղեկությունների անբարեխիղճ օգտագործումը՝ պաշտոնեական դիրքն օգտագործելով.
Հոդված 190.2. 3-րդ մաս կետ 3) գույքային չարաշահումը՝ պաշտոնեական դիրքն օգտագործելով.
Հոդված 195. 2-րդ մաս կետ 3) Հակամրցակցային գործունեությունը՝ պաշտոնեական դիրքն օգտագործելով,
Հոդված 200. Առևտրային կաշառքը.
Հոդված 201. Արհեստավարժ մարզամրցումների և հանդիսադիր առևտրային մրցույթների մասնակիցներին ու կազմակերպիչներին կաշառելը.
Հոդված 214. Առևտրային կամ այլ կազմակերպությունների ծառայողների կողմից լիազորությունները չարաշահելը.

Հոդված 308. Պաշտոնեական լիազորությունները չարաշահելը.

Հոդված 309. Պաշտոնեական լիազորություններն անցնելը.

Հոդված 310. Ձեռնարկատիրական գործունեությանն ապօրինի մասնակցելը

Հոդված 310.1. Ապօրինի հարստանալը.

Հոդված 311. Կաշառք ստանալը.

Հոդված 311.1. Պաշտոնատար անձ չհանդիսացող հանրային ծառայողի կողմից ապօրինի վարձատրություն ստանալը.

Հոդված 311.2. Իրական կամ ենթադրյալ ազդեցությունը օգտագործելը.

Հոդված 312. Կաշառք տալը.

Հոդված 312.1 Պաշտոնատար անձ չհանդիսացող հանրային ծառայողին ապօրինի վարձատրություն տալը.

Հոդված 312.2. Իրական կամ ենթադրյալ ազդեցությունն օգտագործելու համար ապօրինի վարձատրություն տալը.

Հոդված 313. Կաշառքի միջնորդությունը.

Հոդված 314. Պաշտոնեական կեղծիքը.

Հոդված 314.2. Հայտարարագրերը Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով դիտավորությամբ չներկայացնելը.

Հոդված 314.3. Հայտարարագրերում կեղծ տվյալ ներկայացնելը կամ հայտարարագրման ենթակա տվյալը թաքցնելը.

Հոդված 332. 3.-րդ մաս Արդարադատության իրականացմանը և քննությանը խոչընդոտելը՝ պաշտոնեական դիրքն օգտագործելով

Հոդված 352. Ակնհայտ անարդար դատավճիռ, վճիռ կամ դատական այլ
ակտ կայացնելը.

Հոդված 375. Իշխանությունը չարաշահելը, իշխանազանցությունը կամ իշխանության անգործությունը.

**Հոդված 4.** Սույն օրենքը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՕՐԵՆՔԸ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ**

**ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 1.** Հայաստանի Հանրապետության վարչական դատավարութան 2013 թվականի դեկտեմբերի 5-ի օրենսգրքի 5-րդ բաժինը լրացնել նոր՝ 31.4.-րդ գլխով.
«**Գ Լ ՈՒ Խ 31.4**

***ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱՎԻՃԱԿԱՅԻՆ ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԻՐԱՎԱՉԱՓՈՒԹՅՈՒՆԸ ՎԻՃԱՐԿԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾԵՐԻ ՎԱՐՈՒՅԹԸ***

**Հոդված 222.12.** ***Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից իրավիճակային հայտարարագիր ներկայացնելու որոշման վերաբերյալ գործերը և դրանց քննության ընթացակարգը***

1. Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) կողմից իրավիճակային հայտարարագիր ներկայացնելու վերաբերյալ որոշման իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերի վարույթի վրա տարածվում են սույն օրենսգրքի 31.2-րդ գլխով նախատեսված կանոնները՝ սույն հոդվածով նախատեսված առանձնահատկությունների հաշվառմամբ:
3. Սույն հոդվածով նախատեսված վարչական դատարան կարող է դիմել այն անձը, ում վերաբերյալ կայացվել է իրավիճակային հայտարարագիր ներկայացնելու վերաբերյալ որոշում:
4. Հայցը կարող է վարչական դատարան ներկայացվել Հանձնաժողովի կողմից իրավիճակային հայտարարագիր ներկայացնելու վերաբերյալ որոշումը ստանալու պահից հնգօրյա ժամկետում:
5. Սույն հոդվածով նախատեսված գործերով դիմումը, ի թիվս սույն օրենսգրքի 222.5-րդ հոդվածի 1-ին մասի 1-4-րդ, 6-րդ, 8-րդ, 10-րդ և 11-րդ կետերով նախատեսված պահանջների, պետք է բովանդակի հիմնավորումներ առ այն, որ Հանձնաժողովի կողմից իրավիճակային հայտարարագիր ներկայացնելու վերաբերյալ որոշումն իրավաչափ չէ: Դիմումին կցվում է Հանձնաժողովի կողմից իրավիճակային հայտարարագիր ներկայացնելու վերաբերյալ որոշումը:
6. Սույն գլխով նախատեսված գործերը վարչական դատարանը քննում և լուծում է միանձնյա:
7.Սույն գլխով նախատեսված գործերով վարչական դատարանը կայացնում է հետևյալ դատական ակտերից մեկը.
1) Հանձնաժողովի որոշումը ուժի մեջ թողնելու մասին.
2) Հանձնաժողովի որոշումը անվավեր ճանաչելու մասին:»:

**Հոդված 2.** Սույն օրենքը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՕՐԵՆՔԸ**

**«ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

***Հոդված 1.*** «Պետական տուրքի մասին» 1997 թվականի դեկտեմբերի 27-ի ՀՕ-186 օրենքի 20-րդ հոդվածը լրացնել նոր՝ 38.2-րդ, 38.3-րդ և 38.4-րդ կետերով.

| | |
|---|---|
| «38.2.Դատավորների թեկնածուների ցուցակում ընդգրկվելու համար նախկին դատավորի կողմից ներկայացված դիմումի և կից ներկայացված փաստաթղթերի ստուգման համար | բազային տուրքի քսանապատիկի չափով. |
| 38.3.Վերաքննիչ դատարաններում դատավոր նշանակվելու համար առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների ցուցակի համալրման նպատակով ներկայացված դիմումի և կից ներկայացված փաստաթղթերի ստուգման համար | բազային տուրքի քսանապատիկի չափով. |
| 38.4.Վճռաբեկ դատարանում դատավոր նշանակվելու համար առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների ցուցակի համալրման նպատակով ներկայացված դիմումի եւ կից ներկայացված փաստաթղթերի ստուգման համար | բազային տուրքի քսանապատիկի չափով.»: |

**Հոդված 2.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ**

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՆԵՐԻ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ**

**1.** ***Ընթացիկ իրավիճակը և իրավական ակտերի ընդունման անհրաժեշտությունը***

2018 թվականին Հայաստանի Հանրապետությունում տեղի ունեցած թավշյա, ոչ բռնի հեղափոխությունից հետո հաստատված քաղաքական իշխանության համար իրապես անկախ, կոռուպցիայից և հովանավորչությունից զերծ դատական իշխանությունը բացարձակ

առաջնահերթություն է: Այս առաջնահերթությունն ընդգծվել է բազմիցս, այդ թվում՝ Կառավարության 2019 թվականի ծրագրի 4.1. կետում մտահոգություն է արտահայտվում, որ նախկինում դատական համակարգի անկախությունը ստվերված է եղել գործադիր իշխանության ապօրինի միջամտությամբ և ընդգծվում է, որ. «Կառավարությունը պետք է կարողանա նաև բացառել դատավորների կողմից անձնական, նյութական շահագրգռվածությամբ՝ կաշառքով, առաջնորդվելու հնարավորությունը:»:

Բացի այդ, դատական բարեփոխումների հանձնառությունն ընդգծվել է ՀՀ վարչապետի սույն թվականի մայիսի 20-ի՝ դատահրավական համակարգի վերաբերյալ ելույթում և սույն թվականի մայիսի 24-ին Ազգային ժողովում հրավիրված՝ «Անցումային արդարադատության գործիքների կիրառման հեռանկարները Հայաստանում» խորագրով խորհրդարանական լսումների ընթացքում:

Իրապես անկախ, կոռուպցիայից և հովանավորչությունից զերծ դատական իշխանության ձևավորմանն ուղղված քաղաքական կամքը վերահաստատվել է ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի և Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղար Թորբյորն Յագլանդի Ստրասբուրգում կայացած հանդիպման և դրանից հետո Հայաստան ժամանած ԵԽ բարձրաստիճան պատվիրակության ներկայացուցիչների հետ հանդիպումների ընթացքում: Վերահաստատվել է օրենսդրական բարեփոխումների բոլոր գործընթացները Եվրոպայի խորհրդի հետ համագործակցությամբ, միջազգային լավագույն փորձի հիման վրա և Հայաստանի ստանձնած միջազգային պարտավորություններին համապատասխան իրականացնելու պատրաստակամությունը:

Իրապես անկախ, կոռուպցիայից և հովանավորչությունից զերծ դատական իշխանության ձևավորման վերոնշյալ առաջնահերթությամբ պայմանավորված՝ անհրաժեշտություն է առաջացել մշակել դատավորների և Բարձրագույն դատական խորհրդի անդամների **բարեվարքության գնահատման** համար անհրաժեշտ օրենսդրական գործիքակազմ, որը նախատեսված է նաև 2019թվականի հոկտեմբերի 10-ին ՀՀ կառավարության կողմից հաստատված՝ ՀՀ դատական և իրավական բարեփոխումների ռազմավարությամբ:

Գործող օրենսգրքում դատավորների[1] կարգապահական պատասխանատվության ինչպես հիմքերը, այնպես էլ ընթացակարգը խնդրահարույց են: **Արձանագրված խնդիրները հիմնականում հանգում են հետևյալին**.

1) 2018 թվականի մարտի 23-ին ընդունված «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքը պարունակում է կոռուպցիայի կանխարգելման որոշ մեխանիզմներ, սակայն այդ մեխանիզմները, ոլորտի զարգացման համատեքստում, շարունակական փոփոխությունների կարիք ունեն՝ հաշվի առնելով օրենքի կիրառման արդյունքում գործնականում առաջացող խնդիրները: Մասնավորապես, օրենքը սահմանափակվում է այն նվերների շրջանակով, որոնք ողջամտորեն կարող են կապված

[1] Ծանուցում. դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերը վերաբերում են նաև Բարձրագույն դատական խորհրդի անդամներին:

լինել հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների պաշտոնեական (ծառայողական) պարտականությունների իրականացման հետ.

2) «Հանրային ծառայության մասին» 2018 թվականի օրենքը եկամուտների, գույքի և շահերի հայտարարագրման պարտականությունը նախատեսում է միայն օրենքի 34-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ կետերով նախատեսված անձանց և նրանց ընտանիքի անդամների համար: Հանրային պաշտոն զբաղեցնող անձինք և հանրային ծառայողները իրենց անօրինական գործունեության արդյունքում ձեռք բերած գույքը, եկամուտները կարող են թաքցնել ոչ միայն ընտանիքի անդամների միջոցով, այլև իրենց հետ մերձավոր ազգակցությամբ կամ խնամիությամբ կապված անձանց միջոցով: Միաժամանակ, Օրենքով բավականին սահմանափակ է սահմանված հայտարարատու պաշտոնատար անձի ընտանիքի անդամ հասկացությունը: Հաշվի առնելով, որ գործող իրավակարգավորումների պայմաններում բացակայում է հայտարարատու պաշտոնատար անձի հետ մերձավոր ազգակցությամբ կամ խնամիությամբ կապված անձանց գույքի և եկամուտների վերաբերյալ տվյալների ստացման օրենսդրական մեխանիզմը՝ խնդիրը կարգավորելու նպատակով անհրաժեշտություն է առաջանում համապատասխան լրացումներ կատարել օրենքում.

3) 2018 թվականի մարտի 23-ին ընդունված «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխությունների իրականացման արդյունավետությունն ապահովելու համար անհրաժեշտություն է առաջանում փոփոխություններ կատարելը նաև հարակից իրավական ակտերում: Սույնով պայմանավորված փոփոխություններ են կատարվել նաև ՀՀ Քրեական օրենսգրքում, ՀՀ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում և համապատասխանաբար «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքում: Մասնավորապես, «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքի գործող կարգավորումները Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին հնարավորություն չեն տալիս ստանալ հայտարարատու անձանց առնչվող բանկային գաղտնիք պարունակող տեղեկություն: Մինչդեռ առանց դատարանի թույլտվության նման տեղեկատվության ստացումը և ստուգումն ավելի մատչելի և արդյունավետ է դարձնում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի գործունեությունը: Վերջինիս հաշվառմամբ՝ Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպությունը (ՏՀԶԿ) Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի Ստամբուլյան հակակոռուպցիոն գործողությունների գնահատման ծրագրի 3-րդ փուլի՝ Հայաստանի վերաբերյալ զեկույցում[2] առաջարկել է Հայաստանին վերանայել և ուսումնասիրել հետաքննության ընթացքում բանկային, ֆինանսական, առևտրային գաղտնիության վերացման կարգավորումները և դրանց կիրառման եղանակները և համոզվել, որ այդ գործընթացը պարզ է և արդյունավետ և չի խոչընդոտում կոռուպցիոն դեպքերի բացահայտմանը: Բանկային գաղտնիք կազմող

[2] https://www.oecd.org/daf/anti-bribery/Armenia-Round-3-Monitoring-Report-ENG.pdf

տեղեկությունների՝ կոռուպցիայի կանխարգելման մարմիններին հասանելիության մոդելը գործում է տարբեր երկրներում: Մասնավորապես, Բուլղարիայում հայտարարագրերի և գույքի կարգավիճակի ստուգման համար Հակակոռուպցիոն հանձնաժողովը կարող է պահանջել և ստանալ վարկային տեղեկատվություն և բանկային գաղտնիք կազմող տեղեկություններ: Բուլղարիայի Ազգային բանկը ստեղծում և պահպանում է հաճախորդների դրամական պարտավորությունների վերաբերյալ տեղեկատվական համակարգ, որը հասանելի է *inter alia* Կոռուպցիայի դեմ պայքարի և ապօրինի ձեռք բերված ակտիվների բռնագանձման հանձնաժողովին՝ որոշ բացառություններով:[3] Էստոնիայում բանկերը և վարկային կազմակերպությունները ի պատասխան գրավոր հարցման Տնտեսական շահերի հայտարարագրման դեպոզիտարիային պետք է տրամադրեն Կոռուպցիայի դեմ պայքարի օրենքում նշված անձի մասին բանկային գաղտնիք հանդիսացող տեղեկություն՝ տնտեսական շահերի հայտարարագրում նշված տեղեկությունները ճշտելու համար, եթե առկա է կոռուպցիայի կասկած:[4] Նման կարգավորումներ են նախատեսված նաև Իսպանիայում և Պորտուգալիայում, երբ կասկածներ կան պաշտոնատար անձանց կոռուպցիայի մասին:[5]

4) **«Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին»** ՀՀ օրենքի՝ Հանձնաժողովի կազմավորման վերաբերյալ գործող կարգավորումները բավականին խրթին են և, գործնականում, խոչընդոտել են Հանձնաժողովի կազմավորման գործընթացին: Անդրադառնալով Հանձնաժողովի կազմավորման գործընթացի վերաբերյալ միջազգային կազմակերպությունների արձագանքին՝ հարկ է նշել, որ Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (այսուհետ՝ ՏՀԶԿ) Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրների հակակոռուպցիոն ցանցի մոնիթորինգի 4-րդ փուլի «Հակակոռուպցիոն բարեփոխումները Հայաստանում» վերտառությամբ 2018 թվականի զեկույցով[6] (այսուհետ՝ Զեկույց) արձանագրվել է, որ Մոնիթորինգ իրականացնող թիմը մտահոգված էր՝ տեղեկանալով, որ մարմնի ստեղծման և Մրցութային խորհրդի անդամների ընտրության գործընթացի շուրջ տարաձայնություններ կան: Մասնավորապես, Մոնիթորինգի թիմի այցելության ժամանակ մի խումբ հասարակական կազմակերպություններ մտահոգություն են հայտնել Մրցութային խորհրդի անդամների առաջադրման և ընտրության գործընթացի, ինչպես նաև վերջիններիս մասնագիտական կարողությունների վերաբերյալ: Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտություն է առաջացել փոփոխելու Հանձնաժողովի ձևավորման կարգը՝ միաժամանակ ամրապնդելով Հանձնաժողովի գործիքակազմը:

---

[3] https://rm.coe.int/bulgaria-anti-corruption-act-2018-/16808b2c86
[4] http://www.ebf-fbe.eu/uploads/documents/publications/Reports/Bank%20Secrecy/Bk_secrecy_Report04-2004-02083-01-E.pdf
[5] Տե՛ս նույն տեղում:
[6] https://www.oecd.org/corruption/acn/OECD-ACN-Armenia-4th-Round-Monitoring-Report-July-2018-ENG.pdf

Հաշվի առնելով Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի հրատապ կազմավորման օբյեկտիվ անհրաժեշտությունը Հանձնաժողովի առաջին կազմը կձևավորվի նշանակման միջոցով, իսկ հետագա կազմերը՝ մրցութային կարգով: Մասնավորապես, Հանձնաժողովի անդամի պաշտոնում թեկնածուների ընտրության համար Ազգային ժողովի նախագահը ձևավորելու է մրցութային խորհուրդ: Հարկ է նշել, որ Վենետիկի հանձնաժողովը Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի առաջին կազմի ձևավորման համար որպես ժամանակավոր լուծում ընդունելի համարելով նախագծով առաջարկվող կարգավորումը՝ այդուհանդերձ, ընգծել է, որ հետագայում ևս մեկ անգամ պետք է անդրադառնալ Հանձնաժողովի ձևավորման կարգին:

Միաժամանակ, Հանձնաժողովի անդամների թեկնածուների առաջադրման գործընթացի թափանցիկությունը և ապաքաղաքականացվածությունը ապահովելու համար ևս անհրաժեշտ է Հանձնաժողովի հետագա կազմերը ձևավորել մրցութային կարգով:

5) Միևնույն ժամանակ, կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում ՀՀ Կառավարության հռչակած հայեցակարգային կանխադրույթների ու սկզբունքների բոլոր անհրաժեշտ ուղղություններով հետևողական կենսագործման առումով կարևորվում է կոռուպցիոն հանցագործությունների՝ օրենսդրորեն հստակ սահմանում: Ներկայումս կոռուպցիոն հանցագործությունների ցանկը հաստատված է ՀՀ գլխավոր դատախազի 2017 թվականի հունվարի 19-ի թիվ 3 հրամանով: Գլխավոր դատախազի կողմից հաստատված կոռուպցիոն հանցագործությունների ցանկը ներառում է հանցագործությունների բավականին լայն շրջանակ: Նշված հարցը բազմիցս բարձրացվել է նաև միջազգային կազմակերպությունների կողմից, մասնավորապես, Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի հակակոռուպցիոն ցանցի Ստամբուլյան գործողությունների ծրագրի Հայաստանի վերաբերյալ երրորդ գնահատման փուլի զեկույցով[7] նույնպես անդրադարձ է կատարվում ՀՀ կոռուպցիոն հանցագործությունների ցանկի անհարկի ընդգրկուն լինելուն: Ավելին, չորրորդ փուլի զեկույցով[8] սպառիչ կերպով առանձնացվում է կոռուպցիոն հանցագործությունների ցանկը: Ցանկի սպառիչ սահմանումը օրենքով նպատակ ունի նաև կանխորոշելու ստեղծվելիք Հակակոռուպցիոն կոմիտեի գործունեության ծավալը և շրջանակը.

6) կարգապահական պատասխանատվության հիմքերը ձևակերպված են այնքան ընդհանուր, խրթին և բազմաշերտ, որ խախտվում է իրավական որոշակիության սահմանադրական սկզբունքը, իսկ Բարձրագույն դատական խորհրդի հայեցողությունն օրենքի մեկնաբանության հարցում չափազանց լայն է և կարող է հանգեցնել սուբյեկտիվիզմի: Այսպես, ՀՀ գործող «Դատական օրենսգիրք»

[7] https://www.oecd.org/daf/anti-bribery/Armenia-Round-3-Monitoring-Report-ENG.pdf
[8] https://www.oecd.org/corruption/acn/OECD-ACN-Armenia-4th-Round-Monitoring-Report-July-2018-ENG.pdf

սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 142-րդ հոդվածը նախատեսում է կարգապահական պատասխանատվության 4 հիմք՝

- նյութական կամ դատավարական իրավունքի նորմի ակնհայտ և կոպիտ խախտումը.
- դատավորի վարքագծի կանոնները կոպիտ խախտելը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ.
- պարտադիր վերապատրաստում անցնելու պարտականությունը չկատարելը.
- լիազորությունների իրականացմանը միջամտության մասին Բարձրագույն դատական խորհրդին չհայտնելը:

Կոպիտ խախտում (1-ին և 2-րդ հիմքերի դեպքերում) է համարվում այն խախտումը, որը հեղինակազրկում է դատական իշխանությունը՝

- խախտման բնույթով (լրջությամբ), կամ
- խախտման պարբերականությամբ:

Իր հերթին, էական կարգապահական խախտում է՝

- երկու նկատողություն կամ մեկ խիստ նկատողություն ունեցող դատավորի կողմից կարգապահական խախտում կատարելը կամ
- դատավորի կողմից այնպիսի արարք կատարելը, որն անհամատեղելի է դատավորի պաշտոնի հետ:

Ինչպես երևում է մեջբերված իրավանորմերի վերլուծությունից, օրենսդիրը նախատեսել է պատասխանատվություն միայն կոպիտ և էական խախտումների համար: Ստացվում է, որ Օրենսգրքի 69 և 70-րդ հոդվածներում նշված վարքագծի կանոնների ոչ կոպիտ խախտումները (բացառությամբ պարտադիր վերապատրաստում անցնելու պարտականությունը չկատարելու և լիազորությունների իրականացմանը միջամտության մասին Բարձրագույն դատական խորհրդին չհայտնելու) ընդհանրապես ենթակա չեն պատասխանատվության: Բացի այդ, էական կարգապահական խախտումը, որը Սահմանադրության ուժով լիազորությունների դադարեցման անվերապահ հիմք է, մեխանիկորեն կապվում է դատավորի ունեցած կարգապահական տույժերի առկայության հետ՝ առանց լրացուցիչ գնահատման հնարավորության, իսկ երկրորդ կետով՝ անհամատեղելիության պահանջները խախտելու հետ, ինչն ինքնին, ըստ Սահմանադրության 164-րդ հոդվածի 9-րդ մասի, լիազորությունների դադարեցման առանձին հիմք է: Էական կարգապահական խախտման համատեքստում լիազորությունների դադարեցման այլ հիմք նախատեսված չէ:

Բացի այդ, մեղքի ձևին անդրադարձ է կատարվում միայն 2-րդ կետով նախատեսված՝ վարքագծի կանոնների խախտման համատեքստում, ինչն անորոշ է դարձնում մեղքի դրսևորման հարցը մյուս բոլոր հիմքերի դեպքում: Այսպես, վերջիններիս նկարագրությունը չի ընդգրկում մեղքը (*mens rea*), այլ սահմանափակվում է արարքի դեֆինիցիայով (*actus reus*), ինչը ոչ միայն քննադատության է

արժանացել միջազգային պրակտիկայում, այլև խնդիրներ է ստեղծում գործնական կիրառության հարթության մեջ:[9]

Ընդհանուր առմամբ, կարգապահական պատասխանատվության հիմքերն անորոշության և տարամեկնաբանությունների տեղիք են տալիս, այնինչ Վենետիկի հանձնաժողովը բազմիցս ընդգծել է, որ այն դեպքերում, երբ ենթադրվում է դատավորների կարգապահական պատասխանատվության նախատեսում, կարգավորումները պետք է լինեն շատ ավելի հստակ:[10]

Անորոշության հետ կապված քննադատության է արժանացել օրինակ **Ուկրաինայի** օրենսդրությունը, որը նախատեսում էր պատասխանատվություն էթիկայի կանոնների «պարբերական կամ կոպիտ» խախտումների համար:[11]

**Սերբիայի** օրենսդրության գնահատման արդյունքներով, որտեղ նույնպես օգտագործվում էին ավելի անորոշ ձևակերպումներ (violation of the provisions of the code of ethics to a great extent; grave disciplinary offences), ԵԱՀԿ պատվիրակությունը խորհուրդ է տվել որոշակիացնել համապատասխան եզրույթների էությունը օրենսդրական մակարդակում, ինչպես նաև գործնականում:[12]

7) <u>կարգապահական պատասխանատվության հիմքերը չեն ընդգրկում դատավորների՝ գույքի, եկամուտների և շահերի հայտարարագրի վերլուծության արդյունքում հայտնաբերված խնդիրների հիման վրա կարգապահական վարույթ հարուցելը</u>, ինչը թույլ չի տալիս անհրաժեշտության դեպքում բազմակողմանիորեն գնահատել դատավորի բարեվարքությունը: Մինչդեռ, միջազգային պրակտիկայում գույքի հայտարարագրման հետ կապած խախտումները հաճախ են նշվում, որպես ավելի ծանր բնույթի կարգապահական խախտումներ, որոնք կարող են հանգեցնել ընդհուպ մինչև դատավորի լիազորությունների դադարեցմանը:

Մակեդոնիայի օրենսդրության վերաբերյալ Վենետիկը հանձնաժողովը նշել է, որ.

*«Նորմալ չէ, երբ [գույքի չհայտարարագրումը] նախատեսված է որպես միջին ծանրության կարգապահական խախտում: Վենետիկի հանձնաժողովը հիշեցնում է, որ «ակտիվների ամբողջական հայտարարագրումը արժեքավոր գործիք է հանդիսացել այլ երկրների կոռուպցիայի դեմ պայքարում»: Վենետիկի հանձնաժողովի կարծիքով, գույքը և եկամուտները բացահայտելու պարտականությունը պետք է ասոցացվի այնպիսի սանկցիայի հետ, որը բավականաչափ խիստ է նման վարքագիծը կանխելու համար:Մինչդեռ կարող են լինել բացառություններ մանր կամ անփութությամբ կատարված*

---

[9] Տե՛ս European Commission For Democracy Through Law (The Venice Commission), Opinion On The Draft Judicial Code of Armenia, 09.10.2017, Strasbourg, կետ 130, International Association of Judges: The Universal Charter of the Judge, approved on 17 November 1999 and updated on 14 November 2017, հոդված 7-1, OSCE/ODIHR, Note on International Standards and Good Practices of Disciplinary Proceedings against Judges, Warsaw, 27 December 2018, (OSCE 2018) կետ 35:

[10] Տե՛ս The Venice Commission, 23.03.2015, Strasbourg, Opinion no. 801 / 2015, կետ 50:

[11] Տե՛ս նույն տեղում:

[12] Տե՛ս Mission to Serbia, Legal Framework and Overview of Case Law on Disciplinary Responsibility of Judges, Tatjana Papić, PhD, May 2016, կետեր 46-48:

*բացթողումների համար, սկզբունքորեն ակտիվները չհայտարարագրելը բավականաչափ լուրջ խախտում է, որը կարող է հիմք հանդիսանալ պաշտոնավարման դադարեցման համար:*[13]

8) գործող Օրենսգրքով նախատեսված կարգապահական տույժերի համակարգն նախազգուշացում, նկատողություն, խիստ նկատողություն տույժերից անմիջապես անցում է կատարում լիազորությունների դադարեցմանը, որն իր հերթին ընդամենը երկու հիմք ունի: Ստացվում է՝ համակարգը զուրկ է այլընտրանքային, գործուն և արդյունավետ կարգապահական տույժերի տեսակներից: Այս խնդրին անդրադարձել է ԵԱՀԿ Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակը՝ նշելով, որ օրենքը պետք նախատեսի դատավորի նկատմամբ կիրառվող կարգապահական տույժերի լայն ընտրություն՝ ամենամեղմից մինչև ամենախիստը.[14]

9) գործող Օրենսգրքում դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի քննության ընթացքում Բարձրագույն դատական խորհուրդը բավականին սահմանափակ գործիքակազմ ունի արդյունավետ և բազմակողմանի քննություն ապահովելու համար: Անգամ վկաներ հրավիրել, փորձաքննություն նշանակել և ապացույցներ պահանջել կարող է միայն դատավորի միջնորդությամբ.

10) խնդրահարույց է Դատավորների ընդհանուր ժողովի Կարգապահական հարցերի հանձնաժողովի կազմավորման կարգը, որը, արդարադատության նախարարի հետ մեկտեղ դատավորների նկատմամբ կարգապահական վարույթ հարուցող մարմին է: Մասնավորապես, հանձնաժողովը կազմված է բացառապես դատավորներից, որոնք ընտրվում են 5 տարով: Վենետիկի հանձնաժողովն ընդգծում է, որ նման կարգավորման պարագայում առկա է վտանգ, որ այդ մարմինը կորդեգրի «կորպորատիվ դիրքորոշում»: Որպես նման վտանգի հաղթահարման միջոցներից մեկը հանձնաժողովն առաջարկել է այլ իրավաբան մասնագետների ևս հանձնաժողովի կազմում ընդգրկելու տարբերակը.[15]

11) ընթացակարգը չի նախատեսում դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ որոշման բողոքարկման հնարավորություն, ինչն անձի՝ իր դեմ կայացված ակտի բողոքարկման իրավունքի խախտում է: Ինչ վերաբերում է Սահմանադրական դատարան բողոքարկման հնարավորությանը, ապա այն չի համարվում պատշաճ բողոքարկում, քանի որ Սահմանադրական դատարանը կարող է քննել միայն անձի նկատմամբ կիրառված իրավական նորմի սահմանադրականության հարցը, ինչպես ցանկացած այլ անձի պարագայում: Բացի այդ, նման հարց քննելը Սահմանադրական դատարանի հիմնական գործառույթը չէ: Ուստի, դատավորը

[13] Տե՛ս The Venice Commission, 21.12.2015, Strasbourg, Opinion No. 825 / 2015, կետ 39:

[14] Տե՛ս OSCE/ODIHR, NOTE ON INTERNATIONAL STANDARDS AND GOOD PRACTICES OF DISCIPLINARY PROCEEDINGS AGAINST JUDGES, 27.12.2018, կետ 48:

[15] Տե՛ս The Venice Commission, Opinion On The Draft Judicial Code of Armenia, 09.10.2017, Strasbourg, կետ 135:

պետք է ունենա արդյունավետ բողոքարկման կառուցակարգ իրեն կարգապահական պատասխանատվության ենթարկելու վարույթում.[16]

12) անկատար է նաև դատավորների թեկնածուների հավակնորդների որակավորման ստուգման համակարգը. տարբեր հասարակական կազմակերպություններից և որակավորման ստուգմանը մասնակցած անձանցից ստացված բողոքների ուսումնասիրության արդյունքում նույնականացված խնդիրները հիմնականում վերաբերում են դատավորների թեկնածուների հավակնորդների որակավորման ստուգման գրավոր փուլի գնահատման պատճառաբանվածությանը, հարցազրույցի ընթացակարգին և գնահատման չափանիշներին, քննության արդյունքների բողոքարկման ընթացակարգին և որոշումների ընդունման թափանցիկությանը:

13) դատավորների գործունեության գնահատում. իրավական պետության առաջնահերթ խնդիրներից է ունենալ արդյունավետ և պրոֆեսիոնալ դատական իշխանություն: Հասարակությունն արժանի է ունենալու ձեռնհաս դատավորներ, և իմանալ, որ այդ դատավորները հաշվետու են իրենց մասնագիտական հմտությունները պահպանելու համար, ինչը կհանգեցնի դատական իշխանության նկատմամբ հասարակության վստահության բարձրացման[17]:

Դատավորների գնահատման համակարգի ներդրման անհրաժեշտությունը սահմանված է բազմաթիվ միջազգային փաստաթղթերով:

Այսպես, Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի թիվ (2010)12 «Դատավորների անկախության, արդյունավետության և պարտականությունների մասին» հանձնարարականի 42-րդ կետում նշված է, որ «արդարադատության իրականացման արդյունավետությանը և դրա որակի շարունակական բարելավմանը նպաստելու տեսանկյունից անդամ երկրները պետք է ներդնեն դատական իշխանության կողմից դատավորների գնահատման համակարգեր»:

Ըստ այդմ, ՀՀ դատական օրենսգրքի 2014 թվականի փոփոխությունների արդյունքում առաջին անգամ ներդրվեց դատավորների գնահատման համակարգը:

Ավելին, 2018 թվականի փետրվարի 7-ին ընդունված Օրենսգրքով ևս նախատեսվեց դատավորի գործունեության գնահատումը՝ այն վերապահելով Բարձրագույն դատական խորհրդին:

Այդուհանդերձ, հարկ է նշել, որ 2014 թվականից առ այսօր չի իրականացվել դատավորների գործունեության գնահատում, ինչը բացասաբար է ազդում դատական իշխանության գործունեության արդյունավետության վրա, քանի որ առանց դատավորների գործունեության պարբերական գնահատման անհնար է բացահայտել դատավորի աշխատանքի արդյունավետությունը բարելավելու

[16] Տե՛ս Recommendation CM/Rec(2010)12, կետ 69, The Venice Commission, Opinion On The Draft Judicial Code of Armenia, 09.10.2017, Strasbourg, կետեր 143-450:

[17] Տես OSCE/ODHIR, Assessment of the performance evaluation pf judges in Moldova, էջ 50, https://www.osce.org/odihr/120213?download=true

ուղիները, նպաստել դատավորի ինքնակատարելագործմանը և դատարանի գործունեության արդյունավետության բարելավմանը: Ընդ որում, դատավորների գործունեության գնահատման արդյունավետության և թափանցիկության ապահովման տեսանկյունից հարկ է այն իրականացնելու լիազորությունը վերապահել բացառապես դատավորների գործունեության գնահատման համար պատասխանատու մարմնի, որը կազմված կլինի ոչ թե միայն դատավորներից, այլև իրավաբան գիտնականներից:

**2. *Առաջարկվող կարգավորման բնույթը***

Ներկայացվող նախագծերի փաթեթը կոչված է ապահովելու դատավորների բարեվարքության գնահատման համար արդյունավետ և համալիր իրավական հիմքեր հետևյալ ուղղություններով՝ **գույքային դրություն (գույքի օրինականության ստուգում), արհեստավարժություն և հարգանք մարդու իրավունքների նկատմամբ, անկողմնակալություն (որոշակի կապերից, ազդեցություններից ազատ որոշման կայացում):** Դատավորների բարեվարքության գնահատման առաջարկվող կառուցակարգը որդեգրել է հետևյալ սկզբունքները՝

ա) բարեվարքության գնահատումը չպետք է իրականացվի ժամանակավոր գործիքակազմի միջոցով և չպետք է կրի ժամանակավոր բնույթ: Փոխարենը, գործընթացը կրելու է շարունակական բնույթ, և դատավորները նախագծերի փաթեթի ընդունվելուց հետո մշտապես անցնելու են նման գնահատման միջով: Միևնույն ժամանակ, հարցը Բարձրագույն դատական խորհրդի կողմից քննության է ենթարկվելու միայն կասկածների առկայության պարագայում: Այլ խոսքերով՝ բոլոր դատավորների վերաբերյալ մեխանիկորեն վարույթներ չեն քննվելու Բարձրագույն դատական խորհրդում.

բ) դատավորների բարեվարքության գնահատումն իրականացնելու համար ստեղծվելու է ոչ թե նոր՝ *ad hoc* մարմին, այլ այդ հարցի լուծման համար պատասխանատու է լինելու դատական համակարգի անկախության ապահովման սահմանադրական առաքելությամբ օժտված մարմինը՝ Բարձրագույն դատական խորհուրդը:

Առաջադրված նպատակի իրագործման համար առաջարկվում են հետևյալ օրենսդրական փոփոխությունները՝

1) «Հանրային ծառայության մասին» օրենքի 29-րդ հոդվածի վերնագրից, 1-ին և 3-րդ մասերից, 30-րդ հոդվածի վերնագրից հանել պաշտոնեական (ծառայողական) պարտականությունների իրականացման հետ կապված բառերը, այսինքն **նախատեսել նվերների ավելի մեծ շրջանակի ընդունման արգելք**:

2) **Հայտարարագրերի վերլուծության գործընթացի արդյունավետության տեսանկյունից կարևորվում է հայտարարատու պաշտոնատար անձի ընտանիքի կազմի ընդլայնումը, միաժամանակ, առաջարկվում է նաև իրավիճակային հայտարարագիր ներկայացնելու**

**պարտականություն նախատեսել պաշտոնատար անձի հետ փոխկապակցված անձանց համար՝ սահմանելով նաև այդ պարտականությունը չկատարելու համար պատասխանատվություն**: Միջազգային փորձի ուսումասիրությունը ևս ցույց է տալիս, որ տարբեր երկրներում, օրինակ՝ Ալբանիա, Սլովենիա, եթե պաշտոնատար անձի կողմից տրամադրված տվյալների համեմատությունը նրա փաստացի իրավիճակի հետ հիմք է տալիս ենթադրելու, որ հայտարարագիր ներկայացնելու պարտավորություն ունեցող անձը իր եկամուտները և ակտիվները փոխանցել է իր ընտանիքի անդամներին օրենքով նախատեսված պատասխանատվությունից խուսափելու համար, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը կարող է պահանջել ներկայացնել փոխկապակցված անձանց եկամուտների և ակտիվների իրավիճակային հայտարարագիր:

**3) Միևնույն ժամանակ, առաջարկվում է Հանձնաժողովին՝ բանկային, առևտրային, ապահովագրական գաղտնիքի վերաբերյալ տեղեկատվություն պահանջելու և ստանալու հնարավորության տրամադրումը:** Զուգահեռաբար, առաջարկվում է նաև փոփոխել Հանձնաժողովի կազմավորման կարգը: Ի լրումն, հաշվի առնելով Հանձնաժողովի դերը կոռուպցիայի կանխարգելման հարցում, ինչպես նաև Կառավարության ծրագրով ամրագրված՝ կոռուպցիայի կանխարգելման տարր կազմող նոր մեխանիզմների ներդրման անհրաժեշտությունը՝ առաջարկվում է ընդլայնել Հանձնաժողովի գործառույթների և լիազորությունների շրջանակը:

**4) Հստակեցվել են դատավորի վարքագծի կանոնները և կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերը:** Այսպես, դատավորի վարքագծի կանոններից հանվել են այն կանոնները, որոնք բնույթով ոչ թե կարգապահական, այլ էթիկայի կանոններ են, որոնց համար դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելը կամ արդարացված չէ կամ հնարավոր չէ՝ նորմի անորոշ, չափազանց լայն ձևակերպման պատճառով: Միջազգային մասնագիտացված մարմինները կոչ են անում էթիկայի կանոնները տարանջատել կարգապահական կանոններից, քանի որ առաջիններն ընդունվում են դատավորին ուղղորդելու նպատակով և պետք է հստակ տարանջատվեն կարգապահական խախտումների ցանկից, որոնք նախատեսվում են դատավորի նկատմամբ համապատասխան սանկցիա կիրառելու նպատակով:[18] Կարևոր է, որ վարքագծի կանոնները լինեն հնարավորինս հստակ և խախտվելու դեպքում զգալի վնաս հասցնեն օրենքով պաշտպանվող շահերին, իսկ խախտումը հնարավոր լինի ապացուցել: Այնուամենայնիվ, վարքագծի այն կանոնները, որոնք հանվել են հստակություն ապահովելու նպատակով, կարող են տեղ գտնել դատավորների էթիկայի կանոններում, որոնք նրանց համար ուղղորդիչ նշանակություն ունեն և որոնց խախտումը պատասխանատվություն չի առաջացնում:

Միևնույն ժամանակ, ավելացվել են այնպիսի վարքագծի կանոններ, որոնց խախտումը կասկածի տակ է դնում դատավորի անկախությունը, անկողմնակալությունը և անկաշառությունը, օրինակ՝ (1)

[18] Տե՛ս OSCE/ODIHR, Note on International Standards and Good Practices of Disciplinary Proceedings against Judges, կետ 15:

ներկայացնել գույքի, եկամուտների և շահերի ամբողջական հայտարարագիր «Հանրային ծառայության մասին» օրենքով նախատեսված պահանջների պահպանմամբ, (2) «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքով նախատեսված դեպքերում և կարգով Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին ներկայացնել պատշաճ նյութեր, որոնք հաստատում են, որ իր գույքի փոփոխությունը (գույքի ավելացումը և (կամ) պարտավորությունների նվազումը) ողջամտորեն հիմնավորվում է օրինական եկամուտներով, կամ իր մոտ առկա չէ չհայտարարագրված կամ ոչ ամբողջական հայտարարագրված գույք, կամ եկամտի աղբյուրը օրինական է և արժանահավատ է,

(3) ինքնաբացարկի հիմքերի առկայության դեպքում դրանք բացահայտել կողմերին, ինչպես նաև օրենքով նախատեսված դեպքերում և կարգով հայտնել ինքնաբացարկ:

Ի հավելումն՝

- բոլոր կետերում ընդգծվել է, որ կարգապահական խախտումը պատասխանատվության հիմք կարող է լինել միայն այն դեպքում, երբ կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ: Այս լրացումը ողջունել է Վենետիկի հանձնաժողովը Նախագծերի փաթեթի վերաբերյալ հրապարակած իր կարծիքում՝ ընդգծելով, որ այն անհրաժեշտ և էական լրացում է.[19]
- հանվել է շփոթությունների տեղիք տվող՝ կոպիտ կարգապահական խախտման ինստիտուտը.
- էական կարգապահական խախտման մասով՝ ա) նյութական և դատավարական իրավունքի նորմի խախտման կետում ընդգծվել է, որ նման խախտումն էական է, եթե հանգեցրել է Սահմանադրությամբ կամ Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերով ամրագրված՝ մարդու հիմնարար իրավունքների խախտման կամ հեղինակազրկում է դատական իշխանությունը: Նման մոտեցում ամրագրվել է այն նպատակով, որպեսզի մի կողմից դատավորը պատասխանատվության չենթարկվի պարզապես փաստերի և ապացույցների իր գնահատման համար, մյուս կողմից՝ գնահատման ենթարկվի դատավորի վերաբերմունքը մարդու իրավունքների նկատմամբ՝ որպես բարեվարքության կարևոր ցուցանիշ: Նույն տրամաբանությամբ, կարգապահական վարույթ հարուցելու առիթների (ոչ հիմքերի) ցանկում ավելացվել է մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունների խախտում արձանագրող՝ Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային դատարանի կամ այլ միջազգային ատյանի կայացրած ակտի ուսումնասիրության արդյունքում առերևույթ կարգապահական խախտման հատկանիշներ պարունակող արարքի հայտնաբերումը, որի վերաբերյալ վերջնական որոշում, կրկին, կայացնելու է Բարձրագույն

[19] http://moj.am/storage/uploads/CDL2019030_ARM.pdf, կետ 47:

դատական խորհուրդը: Նշված դրույթները պետք է մեկնաբանվեն 142-րդ հոդվածի 7-րդ մասի համատեքստում, որի համաձայն՝ դատական ակտի բեկանումը կամ փոփոխումը ինքնին հիմք չէ այդ ակտը կայացրած դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու համար: Այս կարգավորման առնչությամբ Վենետիկի հանձնաժողովը նշել է, որ 142-րդ հոդվածի վերոնշյալ երաշխիքների հաշվառմամբ որևէ սխալ բան չկա միջազգային ատյանների կողմից արձանագրված մարդու իրավունքների խախտումները առանձնացնելու մեջ, եթե դրանք կատարվել են դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ, ինչպես և առաջարկվում է.[20]

բ) տրվել է վարքագծի կանոնների հստակ ցանկ, որոնց (մեկանգամյա) խախտումը, պայմանավորված խախտման հանգամանքներով և (կամ) հետևանքներով համատեղելի չէ դատավորի կարգավիճակի հետ կամ (պարբերական) հեղինակազրկում է դատական իշխանությունը: Այս իմաստով, նախագիծը պարունակում է գնահատողական եզրույթ: Այս կապակցությամբ Վենետիկի հանձնաժողովը եզրահանգել է, որ օրենսդրի կողմից բաց (ոչ սպառիչ) ձևակերպումների օգտագործումը որոշ չափով անխուսափելի է՝ անհրաժեշտ ճկունությունն ապահովելու նպատակով: Այդ իրավիճակում կարևոր է, թե ով պետք է կիրառի և մեկնաբանի այդ ձևակերպումները: Հայաստանում դրա համար պատասխանատու է Բարձրագույն դատական խորհուրդը, որն օժտված է անկախության երաշխիքներով և համապատասխանում է արդար դատաքննության չափանիշներին:[21] Առաջարկվող ճկունությունն առկա իրավակարգավորման պարագայում, անհրաժեշտ է համաչափության գնահատման համար: Բանն այն է, որ Սահմանադրության 164-րդ հոդվածի 9-րդ մասի ուժով էական կարգապահական խախտումը լիազորությունների դադարեցման անվերապահ հիմք է, ուստի, ծայրահեղական դրսևորումներից խուսափելու համար, Բարձրագույն դատական Խորհրդին արարքի և դրա համար պատասխանատվության միջոցի միջև համաչափության և արդարացիության ապահովման անհրաժեշտ գործիք է տրվում.

գ) կարևորություն չներկայացնող խախտումների դեպքում դատավորների նկատմամբ կարգապահական վարույթ չհարուցելու նպատակով Վենետիկի հանձնաժողովի առաջարկով[22] նախատեսվել է *de minimis* շեմ, որի համաձայն՝ արարքը չի համարվում կարգապահական խախտում, եթե այն, թեև ձևականորեն պարունակում է սույն օրենսգրքով սահմանված՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերի հատկանիշներ, սակայն իր նվազ կարևորության պատճառով կասկածի տակ չի դնում տվյալ դատավորի համապատասխանությունը դատավորի կարգավիճակին:

[20] http://moj.am/storage/uploads/CDL2019030_ARM.pdf, կետ 50:
[21] Տե՛ս նույն տեղում, կետ 40:
[22] http://moj.am/storage/uploads/CDL2019030_ARM.pdf, կետ 49:

**5) Ընդլայնվել են կարգապահական տույժերի տեսակները:** Մասնավորապես, գործող օրենսգրքով ամրագրված՝ կարգապահական տույժի տեսակներին ավելացել է միջին խստության տույժ՝ պատասխանատվության պատշաճ և համաչափ գործիքներ ներդնելու նպատակով: Մասնավորապես, նոր տույժի տեսակներ են՝ առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների ցուցակի հերթական համալրման ժամանակ ցուցակում ընդգրկվելու արգելքը և դատարանի նախագահի, կամ Վճռաբեկ դատարանի պալատի նախագահի պաշտոնից ազատումը:

**6) Կատարելագործվել է դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու ընթացակարգը:**

Այսպես, ա) կարգապահական վարույթ հարուցելու լիազորություն ունեցող մարմինների թվին ավելացել է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը՝ գույքի, եկամուտների և շահերի հայտարարագրերում խնդիրներ հայտնաբերելու դեպքում: Հանձնաժողովին օրենքով վերապահված գործառութային առանձնահատկությունները վերջինիս հնարավորություն են տալիս արդյունավետ և ամբողջական տեղեկատվություն ստանալ դատավորի և Բարձրագույն դատական խորհրդի անդամի գույքային ու ֆինանսական դրության վերաբերյալ և խախտումներ կամ կոռուպցիոն ռիսկեր հայտնաբերելու դեպքում կարգապահական վարույթ հարուցել և դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու միջնորդությամբ դիմել Բարձրագույն դատական խորհրդին, բ) 5 տարի ժամկետով և միայն դատավորներից բաղկացած Կարգապահական հանձնաժողովը նախատեսվում է փոխարինել 2 տարի ժամկետով ընտրվող էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովով, որի անդամները, բացի դատավորներից, ընդգրկում են նաև այն հասարակական կազմակերպությունների կողմից առաջադրված իրավաբան գիտնականներին, որոնց կանոնադրական նպատակներից է մարդու իրավունքների պաշտպանությանը կամ դատական համակարգի հանրային հաշվետվողականության բարձրացմանն ուղղված գործունեությունը և որոնք վերջին հինգ տարիներին իրականացնում են նման գործունեություն՝ սահմանելով նաև իրավաբան գիտնականներին առաջադրվող պահանջները.

գ) երկարացվել են կարգապահական վարույթ հարուցելու ժամկետները, քանի որ գործող ժամկետներն օբյեկտիվորեն հնարավորություն չեն ընձեռնում վարույթ հարուցող մարմիններին համարժեք արձագանքել կարգապահական խախտումներին, ինչը վտանգավոր է՝ հաշվի առնելով, թե որքան լուրջ հետևանքներ կարող են ունենալ դատավորների կողմից թույլ տրված խախտումները.

դ) Բարձրագույն դատական խորհրդին լրացուցիչ գործիքներ են տրվել դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցն արդյունավետ քննելու համար: Մասնավորապես, ըստ նախագծի խորհուրդը կարող է սեփական նախաձեռնությամբ հրավիրել վկաներ, նշանակել փորձաքննություն և պահանջել ապացույցներ՝ մի բան, որ գործող կարգավորման պայմաններում կարող է անել միայն դատավորի միջնորդությամբ.

ե) նախատեսվել է կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ որոշումը բողոքարկելու կառուցակարգ, որն արդյունավետ դարձնելուն, սակայն, առկա են սահմանադրական խոչընդոտներ: Մասնավորապես, բողոքարկման կառուցակարգ մշակելիս քննարկման առարկա են դարձել հետևյալ տարբերակները՝

- դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի քննարկումը վերապահել Բարձրագույն դատական խորհրդի երեք անդամից բաղկացած կազմին, իսկ բողոքարկումը՝ յոթ անդամից բաղկացած կազմին, որը չէր ներառի առաջին անգամ հարցը քննած երեք անդամին: Այս տարբերակի հետ կապված մտավախությունն այն էր, որ Սահմանադրությունը, դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը Բարձրագույն դատական խորհրդին վերապահելով, ի նկատի ունի խորհրդի կազմն ամբողջությամբ, և երեք կամ յոթ անդամի կազմով հարցի քննությունը կարող է հանգեցնել ընտրված մոդելի հակասահմանադրականության.

- դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ որոշման դեմ բերված բողոքի քննությունը վերապահել Վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական գործերով պալատին: Այս տարբերակը ևս ունի սահմանադրական խոչընդոտ, քանի որ սահմանադրությունը վճռաբեկ դատարանի համար նախատեսել է իրավասության խիստ սահմանափակ շրջանակ՝ օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառությունը և մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտումների վերացումը: Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու (կամ միջնորդութունը մերժելու) վերաբերյալ որոշման դեմ բողոք քննելը ոչ միշտ է տեղավորվում վերոգրյալ լիազորությունների շրջանակներում.

- դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ (կամ միջնորդությունը մերժելու) որոշման դեմ բերված բողոքի քննությունը վերապահել վարչական կամ վարչական վերաքննիչ դատարաններին: Այս պարագայում կխախտվեր մատնանշված դատարանների և Բարձրագույն դատական խորհրդի՝ որպես դատարանների անկախության երաշխավորի միջև դերերի բաշխման և աստիճանակարգության անհրաժեշտ և ողջամիտ հավասարակշռությունը:

Հաշվի առնելով վերը նկարագրված խոչընդոտները՝ նախատեսվել է բողոքարկման հետևյալ մոդելը. դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ (միջնորդությունը մերժելու) որոշման դեմ բերված բողոքի քննությունը ևս իրականացնելու է Բարձրագույն դատական խորհուրդը, եթե ի հայտ է եկել այնպիսի էական ապացույց կամ հանգամանք, որը դատավորը կամ վարույթ հարուցող մարմինը նախկինում չի ներկայացրել իր կամքից անկախ հանգամանքներով, և

որը ողջամտորեն կարող է ազդել որոշման վրա: Ներկայացված մոդելն ակնհայտորեն ամենաարդյունավետը չէ, սակայն ավելի արդյունավետ և ողջամիտ կարգավորում հնարավոր կլինի սահմանել միայն սահմանադրական փոփոխություններից հետո.

զ) հստակեցվել է նաև դատավորի նկատմամբ ոչ իր լիազորությունների իրականացման հետ կապված քրեական հետապնդում հարուցվելու դեպքում Բարձրագույն դատական խորհրդին տեղեկացնելու հարցը՝ դատավորի լիազորությունների կասեցման համար:

**7) «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքում ևս կատարվել են համարժեք փոփոխություններ**: Մասնավորապես, օրենքը համապատասխանեցվել է Օրենսգրքին՝ վարքագծի կանոնների վերաբերելի մասով, այդ թվում՝ հայտարարագրերը պատշաճ կերպով ներկայացնելու և Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին անհրաժեշտ նյութեր տրամադրելու մասով: Բացի այդ, որպես Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից Սահմանադրական դատարանի դատավորի նկատմամբ գույքային դրության ստուգման արդյունքում կարգապահական վարույթ նախաձեռնելու տարբերակ առաջարկվել է հանձնաժողովի կողմից Ազգային Ժողով միջնորդություն ներկայացնելու մոդելը, որն էլ կարող է դիմել Սահմանադրական դատարան՝ Սահմանադրական դատարանի դատավորի լիազորությունները էական կարգապահական խախտման հիմքով դադարեցնելու նպատակով.

8) Դատավորների թեկնածուների հավակնորդների որակավորման ստուգման կարգավորումները կատարելագործվել են՝ նախատեսելով, որ գրավոր առաջադրանքի բարդությունը պետք է համաչափ լինի դրա լուծման համար տրամադրվող ժամանակին: Ինչպես նաև նախատեսվել է, որ գնահատման հանձնաժողովում ընդգրկվելու են այն դատավորները, որոնց գործունեությունը գնահատված լինելու դեպքում գնահատման վերջին արդյունքներով՝ բարձր կամ լավ գնահատական են ստացել: Նաև սահմանվել է, որ գնահատման հանձնաժողովի անդամները չպետք է գնահատման ընթացքում միմյանց հետ քննարկեն գրավոր աշխատանքին տրվող գնահատականները և դրանց պատճառաբանությունը: Ներդրվել են գրավոր քննության արդյունքները բողոքարկելու կառուցակարգ, ինչպես նաև հարցազրույցի փուլից առաջ հատուկ դատավորի համար անհրաժեշտ որակների ստուգման համար մշակված հոգեբանական թեստավորման համակարգ: Ի հավելումն, թեկնածուների ընտրության համար սահմանվել է բաց քվեարկություն, ինչը կբարձրացնի գործընթացի թափանցիկությունը:

**9) Կարևոր է նաև դատավորների թեկնածուների հավակնորդների տարիքային շեմի իջեցումը քսանութից քսանհինգ,** ինչպես նաև դատավորի թեկնածուների հավակնորդերին և առաջխաղացման ենթակա դատավորների ցուցակում իրավաբան գիտնականների ընգրկման պայմանների վերանայումը: Այս փոփոխությունը թույլ կտա դատական համակարգ ներգրավել երիտասարդ, կասկածելի կամ վարկաբեկող կապեր չունեցող, համակարգի այլ ներկայացուցիչների

հետ կախվածության կամ կապվածության մեջ չգտնվող անձանց: Ի լրումն, արհեստավարժությունը ուղղակիորեն կախված չէ տարիքից, այն պայմանավորված է մասնագիտական գիտելիքների և հմտությունների շարունակական կատարելագործմամբ, իրավագիտության բնագավառում ժամանակակից զարգացումների և առաջադեմ միջազգային փորձի յուրացմամբ և այլն: Այդ պատճառով դատավորի նվազագույն տարիքային շեմ ոչ միայն սահմանված չէ միջազգային մասնագիտացված կառույցների կողմից, այլև մի շարք երկրներում նման շեմ ընդհանրապես օրենքով սահմանված չէ: Դատավոր նշանակվելու կամ այդ նպատակով ուսուցում անցնելու ցածր տարիքային շեմ է նախատեսվում մի շարք երկրներում, իսկ որոշ երկրներում ընդհանրապես նման շեմ չի սահմանվում՝ շեշտը դնելով մասնագիտական հմտությունների և փորձի վրա: Նման բարեփոխում է կատարվել օրինակ Էստոնիայում, որտեղ դատավոր դառնալու նվազագույն տարիքային շեմ նախատեսված չէ, փոխարենը նախատեսված են կրթական ցենզի և համապատասխան մասնագիտական և անձնային որակների վերաբերյալ պահանջներ:[23] Այս բարեփոխումը դրական արդյունքներ է արձանագրել՝ բարեփոխումների այլ բաղադրիչների հետ մեկտեղ Էստոնիայի դատական համակարգը դարձնելով Եվրոպայում ամենաարդյունավետներից և անկախներից մեկը:[24] Դատավորների համար նվազագույն տարիքային շեմ նախատեսված չէ նաև Ավստրիայում, Դանիայում և Ռումինիայում: Դատավորների համար ցածր տարիքային շեմ է նախատեսված մի շարք երկրներում: Մասնավորապես, Նորվեգիայում շրջանային և վերաքննիչ դատարանների դատավորների նվազագույն տարիքը 25-ն է:[25] Միևնույն տարիքն է սահմանված նաև Թայլանդում, Ռուսաստանի Դաշնությունում, [26] Բելառուսում: [27] Վենետիկի հանձնաժողովը, քննարկելով դատավորների թեկնածուների նվազագույն տարիքային շեմին վերաբերող հարցը, շեշտել է, որ եվրոպական չափանիշները վերաբերում են արժանիքների վրա հիմնված և խտրականությունը բացառող ընտրությանը և չեն նախատեսում տարիքի վերաբերյալ համընդհանուր չափանիշ:[28]

Վերանայվել են դատավորի թեկնածուների ցուցակում, ինչպես նաև իրավաբան գիտնականների՝ առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների ցուցակում ընդգրկվելու համար սահմանված աշխատանքային փորձառության և գիտական աստիճանին ներկայացվող պահանջները, քանի որ գործող պահանջները խոչընդոտում էին որակյալ, սակայն պահանջվող փորձառություն չունեցող անձանց ընդգրկվելը համապատասխան ցուցակներում: Մասնավորապես, դատավորի թեկնածուների հավակնորդների ցուցակում ընդգրկվելու համար պահանջվող առնվազն

[23] https://www.riigiteataja.ee/en/eli/ee/Riigikogu/act/515072016002/consolide
[24] https://www.riigikohus.ee/en/news-archive/estonian-judicial-system-continues-be-among-most-efficient-europe , International Monetary Fund, "Regional Economic Output. Europe Hitting its Stride", 2017.
[25] https://www.domstol.no/en/The-criminal-court-proceedings/who-is-involved/The-judges/
[26] http://www.consultant.ru/document/cons_doc_LAW_648/efa6329a5506a579e3b9d2c9280b7b8f093922a9/
[27] http://pravo.newsby.org/belarus/kodeks/k009/page2.htm
[28] http://moj.am/storage/uploads/CDL2019030_ARM.pdf, կետ 55:

հինգ տարվա մասնագիտական աշխատանքի փորձառությունը փոխարինվել է երեք տարվա պահանջով: Ինչ վերաբերում է Վերաքննիչ և Վճռաբեկ դատարաններում դատավոր նշանակվելու համար դատավորների առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների ցուցակում իրավաբան գիտնականների՝ ընդգրկվելու համար սահմանված պահանջներին, ապա Վերաքննիչ դատարանի համար սահմանված վերջին 10 տարիների ընթացքում առնվազն ութ տարվա փորձառությունը փոխարինվել է վերջին ութ տարիների ընթացքում առնվազն վեց տարիների փորձով, իսկ Վճռաբեկ դատարանի դեպքում՝ սահմանվել է իրավագիտության բնագավառում գիտական աստիճան ունեցող և վերջին 10 տարիների ընթացքում առնվազն 8 տարի բարձրագույն ուսումնական հաստատությունում իրավունք դասավանդած կամ գիտական հաստատությունում գիտական աշխատանք կատարած անձի ընդգրկվելու պայմաններ:

**10) մանրամասն կարգավորում է ստացել դատավորների գործունեության գնահատումը՝** այն վերապահելով Ընդհանուր ժողովի կողմից ձևավորվող Դատավորների գործունեության գնահատման հանձնաժողովին, սահմանվել է տվյալ հանձնաժողովի կազմավորման և գործունեության կարգը, ցածր կամ միջին գնահատական ստացած դատավորների համար նախատեսվել է լրացուցիչ վերապատրաստում անցնելու պարտականություն:

**11) Նախագծով սահմանվել է Վճռաբեկ դատարանում և վերաքննիչ դատարաններում դատավոր նշանակվելու համար առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների ցուցակի համալրման, ինչպես նաև նախկին դատավորի կողմից դատավորների թեկնածուների ցուցակում ընդգրվկելու նպատակով ներկայացված դիմումի և կից փաստաթղթերի ստուգման համար վճարվող պետական տուրքի դրույքաչափը:** Օրենսգրքի համաձայն՝ վերաքննիչ դատարաններում և Վճռաբեկ դատարանում դատավոր նշանակվելու համար դատավորների առաջխաղացման ենթակա թեկնածուների ցուցակում, ինչպես նաև նախկին դատավորի կողմից դատավորների թեկնածուների ցուցակում ընդգրկվելու համար ներկայացված դիմումին կից պետք է ներկայացված լինի նաև օրենքով սահմանված չափով պետական տուրքի վճարման անդորրագիրը, այնինչ «Պետական տուրքի մասին» օրենքը չի նախատեսում նշված դիմումների և կից ներկայացված փաստաթղթերի ստուգման համար վճարման ենթակա պետական տուրքի չափը: Ուստի, նախագծով նշված հարցին տրվել է լուծում:

12) **Բացի այդ, հարկ է նշել, որ նվազեցվել է Վճռաբեկ դատարանի նախագահի ծանրաբեռնվածությունը**, քանի որ ի լրումն Վճռաբեկ դատարանի պալատի դատավորի լիազորությունների՝ Վճռաբեկ դատարանի նախագահն իրականացնում է նաև մի շարք այլ լիազորություններ, օրինակ՝ ապահովում է Վճռաբեկ դատարանի բնականոն գործունեությունը, ներառյալ՝ վերահսկում է վճռաբեկ դատարանի աշխատակազմի գործունեությունը, Վճռաբեկ դատարանի դատավորներին տրամադրում է արձակուրդ, ներկայացնում է Վճռաբեկ դատարանը այլ

մարմինների հետ հարաբերություններում, Վճռաբեկ դատարանի բնականոն գործունեության ապահովման հետ կապված հարցերով դիմում է Բարձրագույն դատական խորհուրդ, Դատավորների ընդհանուր ժողով և Դատավորների ընդհանուր ժողովի հանձնաժողովներ, Վճռաբեկ դատարանի դատավորի, այդ թվում՝ պալատի նախագահի կողմից դատավորի վարքագծի կանոնի առերևույթ խախտում հայտնաբերելիս այդ մասին համապատասխան հաղորդում է ներկայացնում Կարգապահական հարցերի հանձնաժողով, հրավիրում և վարում է Դատավորների ընդհանուր ժողովը և իրականացնում օրենքով նախատեսված այլ լիազորություններ: Փաստորեն, արդարադատության բուն գործառույթից զատ Վճռաբեկ դատարանի նախագահն իրականացնում է նաև այլ գործառույթներ՝ մասնավորապես ապահովում է Վճռաբեկ դատարանի ներկայացուցչությունն այլ մարմինների, օտարերկրյա մարմինների, միջազգային կազմակերպությունների, զանգվածային լրատվության միջոցների հետ փոխհարաբերություններում, իրականացնում է Դատավորների ընդհանուր ժողովի հրավիրման և վարման հետ կապված գործառույթները, համակարգում օրենսդրական նախագծերի կապակցությամբ Վճռաբեկ դատարանի կողմից ներկայացվող առաջարկություններն ու դիտողությունները, ապահովում է Վճռաբեկ դատարանի բնականոն գործունեությունը:

**13) Նախագծերի փաթեթով առաջարկվում է նաև ՏՀՌԿ առաջարկություններին համապատասխան ՀՀ քրեական օրենսգրքի հավելվածով սահմանել կոռուպցիոն հանցագործությունների սպառիչ ցանկը:**

Միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ մի շարք երկրների դեպքում կոռուպցիոն հանցագործությունների ցանկը սահմանվում է քրեական օրենսգրքերով: Ստորև ներկայացվում են մի շարք երկրների՝ կոռուպցիոն հանցագործությունների ցանկի վերաբերյալ կարգավորումները:

| Հ/Հ | ՊԵՏՈՒԹՅՈՒՆ | ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԳԼՈՒԽ |
|---|---|---|
| 1. | **Իսպանիայի Թագավորություն** | **Գլուխ 5. Կոռուպցիայի մասին**<br><br>**(*հոդվածներ 419-423.* Կաշառք ստանալը**<br>***հոդված 424-425.* Կաշառք տալը**<br>***հոդված 427.* Նախորդ հոդվածներով նախատեսված արարքների կատարումը Եվրոպական միության պաշտոնատար անձանց կամ քաղաքացիական** |

| | | |
|---|---|---|
| | | **ծառայողների մասնակցությամբ, ովքեր Եվրոպական Միության մեկ այլ անդամ պետության քաղաքացի են հանդիսանում)[29]:** |
| **2.** | **Ֆրանսիայի Հանրապետություն** | **Մաս 3.**<br><br>**Պարագրաֆ 2. Պասիվ կոռուպցիա և ենթադրյալ ազդեցության օգտագործումը հանրային ծառայողի կողմից**<br><br>**(*հոդված 432-11.* Պասիվ կոռուպցիա և հանրային ծառայողի կողմից ենթադրյալ ազդեցության օգտագործում),**<br><br>**Գլուխ 3.**<br><br>**Բաժին 1. Ակտիվ կոռուպցիա և ենթադրյալ ազդեցության օգտագործումը մասնավոր անձնաց կողմից**<br><br>**(*հոդվածներ 433-1-433-2.* Ակտիվ կոռուպցիա և մասնավոր անձանց կողմից ենթադրյալ ազդեցության օգտագործում),**<br><br>**Գլուխ 5. Եվրոպական համայնքների հանրային կառավարման, Եվրոպական միության անդամ պետությունների, օտար այլ պետությունների և միջազգային հանրային կազմակերպությունների դեմ ուղղված** |

[29] Օրենսգիրքը հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://www.legislationline.org/documents/section/criminal-codes/country/2/Spain/show:

| | | |
|---|---|---|
| | | **հանցագործություններ**<br><br>**Բաժին 1. Պասիվ կոռուպցիա**<br><br>**(*հոդված 435-1.* Պասիվ կոռուպցիա)**<br><br>**Բաժին 2. Ակտիվ կոռուպցիա**<br><br>**(*հոդված 435-2.* Եվրոպական համայնքների քաղաքացիական ծառայողների, Եվրոպական միության անդամ պետությունների քաղաքացիական ծառայողների, Եվրոպական համայնքների ինստիտուտների անդամների կողմից ակտիվ կոռուպցիան,**<br>***հոդվածներ 435-3-435-4.* Օտարերկրյա իշխանության ներքո գործող անձանց ակտիվ կոռուպցիա՝ բացառությամբ Եվրոպական միության անդամ պետությունների, միջազգային հանրային կազմակերպությունների և Եվրոպական համայնքների ինստիտուտների),**<br><br>**Մաս 4.**<br><br>**Գլուխ 5. Հանրային ծառայություն չիրականացնող անձանց կողմից իրականացվող կոռուպցիոն հանցագործություններ**<br><br>**(*հոդվածներ 445-1-445-4.* Հանրային ծառայություն չիրականացնող անձանց** |

| | | |
|---|---|---|
| | | **պասիվ և ակտիվ կոռուպցիա)[30]:** |
| **3.** | **Ռումինիայի Հանրապետություն** | **Բաժին 5.**<br><br>**Գլուխ 1. Կոռուպցիա և պաշտոնեական հանցագործություններ**<br><br>**(*հոդված 289.* Կաշառք ստանալը,**<br>***հոդված 290.* Կաշառք տալը,**<br>***հոդված 291.* Ենթադրյալ ազդեցության օգտագործումը,**<br>***հոդված 292.* «Ազդեցության գնում»,**<br>***հոդված 293.* Դատարանների կամ արբիտրաժի անդամների կողմից հանցագործության կատարումը,**<br>***հոդված 294.* Օտարերկրյա պաշտոնատար անձանց կողմից հանցագործության կատարումը)[31]:** |
| **4.** | **Ղազախստանի Հանրապետություն** | **Գլուխ 13. Պետական ծառայության շահերի և կառավարության դեմ ուղղված կոռուպցիոն և այլ հանցագործություններ**<br><br>**(*հոդված 307.* Իշխանության չարաշահում,**<br>***հոդված 307-1.* Գումարի կամ այլ ակտիվների վերաբերյալ տեղեկատվական գործառնությունների ապօրինի հրապարակումը կամ այլ կերպ օգտագործումը,** |

[30] Օրենսգիրքը հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://www.legislationline.org/documents/section/criminal-codes/country/30/France/show:
[31] Օրենսգիրքը հասանելի է հետևյալ հղմամբ՝ ՝ https://www.legislationline.org/documents/section/criminal-codes/country/8/Romania/show:

| | | |
|---|---|---|
| | | ***հոդված 308.*** **Պաշտոնեական դիրքի և լիազորությունների չարաշահում,**<br>***հոդված 309.*** **Պաշտոնատար անձի լիազորությունների յուրացում,**<br>***հոդված 310.*** **Ձեռնարկատիրական գործունեությանը ապօրինի մասնակցությունը,**<br>***հոդված 310-1.*** **Օրինական բիզնեսին խոչընդոտումը,**<br>***հոդված 311.*** **Կաշառք ստանալը,**<br>***հոդված 312.*** **Կաշառք տալը,**<br>***հոդված 313.*** **Կաշառքի միջնորդությունը,**<br>***հոդված 314.*** **Պաշտոնեական կեղծիք,**<br>***հոդված 315.*** **Պաշտոնեական անփութություն,**<br>***հոդված 316.*** **Պաշտոնեական անփութություն)**[32]**:** |
| **5.** | **Ավստրալիայի Միություն (Արևմտյան Ավստրալիա նահանգ)** | **Գլուխ 13. Կոռուպցիա և պաշտոնի չարաշահում**<br><br>**(*հոդված 82.* Պաշտոնատար անձի կողմից կաշառակերությունը,**<br>***հոդված 83.*** **Կոռուպցիա,**<br>***հոդված 85.*** **Հանրային ծառայողի կողմից տվյալների կեղծումը,**<br>***հոդված 86.*** **Դատական իշխանության սահմանազանցում,**<br>***հոդված 87.*** **Պաշտոնատար անձի փոխարեն հանդես գալը,**<br>***հոդված 88.*** **Պետական պաշտոնի շուրջ** |

[32] Օրենսգիրքը հասանելի է հետևյալ հղմամբ՝ http://online.zakon.kz/Document/?doc_id=1008032#pos=407;-245:

| | | |
|---|---|---|
| | | **համաձայնության գալը)[33]:** |
| **6.** | **Ֆիջիի Թագավորություն** | **Գլուխ 11. Կոռուպցիա և պաշտոնի չարաշահում**<br><br>**(*հոդված 106.* Պաշտոնական կոռուպցիա,**<br>***հոդված 107.* Շորթումը հանրային ծառայողի կողմից,**<br>***հոդված 108.* Հանրային ծառայողի կողմից հօգուտ այլ անձի գործողություններ կատարելու համար գույք ստանալը,**<br>***հոդված 109.* Հատուկ նշանակության գույքի կառավարման մեջ մեղադրվող պաշտոնատար անձինք,**<br>***հոդված 110.* Պաշտոնատար անձանց կեղծ ցուցմունքները,**<br>***հոդված 111.* Պաշտոնեական դիրքի չարաշահում,**<br>***հոդված 112.* Հանրային ծառայողների կեղծ վկայականները,**<br>***հոդված 113.* Չլիազորված իրավասություններ տալը,**<br>***հոդված 114.* Իրավասու մարմնի կեղծ ենթադրությունը,**<br>***հոդված 115.* Պաշտոնատար անձի փոխարեն հանդես գալը,**<br>***հոդված 116.* Հանրային ծառայողին վնաս պատճառելը)[34]:** |

[33] Օրենսգիրքը հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://www.slp.wa.gov.au/statutes/swans.nsf/(DownloadFiles)/Criminal+Code.pdf/$file/Criminal+Code.pdf:
[34] Օրենսգիրքը հասանելի է հետևյալ հղմամբ՝ http://www.paclii.org/fj/legis/consol_act_OK/pc66/:

| | | |
|---|---|---|
| 7. | **Ամերիկայի Միացյալ Նահանգներ (Այդահո նահանգ)** | **Գլուխ 13. Կաշառակերություն և կոռուպցիա**<br><br>**(*հոդված 18-1301.* Դատական ծառայողների կաշառակերությունը,**<br>***հոդված 18-1302.* Պաշտոնատար անձի կողմից կաշառք ստանալը,**<br>***հոդված 18-1303.* Նվերների ընդունումը,**<br>***հոդված 18-1304.* Երդվյալ ատենակալների և արբիտրների վրա ազդեցություն գործադրելու փորձը,**<br>***հոդված 18-1305.* Երդվյալ ատենակալների և արբիտրների ոչ իրավաչափ վարքագիծը,**<br>***հոդված 18-1308.* Կաշառակերությանն առնչվող իրավախախտումներ,**<br>***հոդված 18-1309.* Տեղական կամ պետական մարմնի պաշտոնատար անձի կաշառակերությունը,**<br>***հոդված 18-1351.* Կաշառակերության և կոռուպցիոն դրսևորումներ,**<br>***հոդված 18-1352.* Կաշառակերությունը պաշտոնական և քաղաքական հարցերում,**<br>***հոդված 18-1353.* Սպառնալիքների և ոչ պատշաճ այլ ազդեցության օգտագործումը պաշտոնական և քաղաքական հարցերում,**<br>***հոդված 18-1353A.*Օրենսդիր, գործադիր, դատական իշխանության կամ ընտրված պաշտոնատար անձանց սպառնալը,**<br>***հոդված 18-1355.* Պատժելիությունը պաշտոնական անօրինական նախկին** |

| | | |
|---|---|---|
| | | **գործողության համար,**<br>***հոդված 18-1356.*** **Հանրային ծառայողի իրավասության տակ գտնվող անձանց կողմից հանրային ծառայողին նվերներ տալը,**<br>***հոդված 18-1359.*** **Անձնական շահի համար պաշտոնեական դիրքի օգտագործումը,**<br>***հոդված 18-1361A.*** **Հանրային ծառայողի բարեկամ հանդիսացող՝ պաշտոնում նշանակված հանրային ծառայողին չփոխհատուցելը)[35]:** |

### 3. *Ակնկալվող արդյունքը*

Նախագծերի փաթեթի ընդունման արդյունքում ակնկալվում է ներդնել դատավորների բարեվարքության գնահատման հավասարակշռված կառուցակարգ, որը մի կողմից թույլ կտա արդյունավետ պայքար մղել դատական իշխանությունում կոռուպցիայի, հովանավորչության, անձնական կապերով առաջնորդվելով դատական ակտ կայացնելու, մարդու իրավունքների հիմնարար խախտումները կոծկելու դեմ, մյուս կողմից՝ հնարավորություն կընձեռի չխաթարել դատական համակարգի անկախությունը և կայունությունը, քանի որ ողջ գործընթացի հիմնական պատասխանատուն լինելու է հենց դատական իշխանության անկախության ապահովման սահմանադրական առաքելությամբ օժտված՝ Բարձրագույն դատական խորհուրդը, իսկ Սահմանադրական դատարանի դատավորների դեպքում՝ Սահմանադրական դատարանը: Ի հավելումն, նախագծերի ընդունման արդյունքում կապահովվեն հայտարարագրման ինստիտուտի նպատակների ամբողջական իրացումը, հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների անօրինական գործունեության արդյունքում ստացած եկամտի, գույքի նկատմամբ վերահսկողության լրիվությունը և արդյունավետությունը, կսահմանվեն անհրաժեշտ կառուցակարգեր՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից գործառույթների լիարժեք իրականացման համար, օրենսգրքով կսահմանվի կոռուպցիոն հանցագործությունների սպառիչ ցանկը:

[35] Օրենսգիրքը հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://legislature.idaho.gov/idstat/Title18/T18CH13.htm:

**4.** ***Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները***

Նախագծերի փաթեթը մշակվել է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության կողմից:

**ՏԵՂԵԿԱՆՔ**

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՄԱՍԻՆ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՆԵՐԻ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԾԱԽՍԵՐԻ ԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԷԱԿԱՆ ԱՎԵԼԱՑՄԱՆ ԿԱՄ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ**

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների և հարակից օրենքների նախագծերի ընդունման դեպքում պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի բյուջեում ծախսերի և եկամուտների էական ավելացում կամ նվազեցում չի առաջանում: